

ՄԱՐԶԻԿ

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԸ ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 3 (321) VOL. XXVIII N° 3 السنة الثامنة والعشرون - العدد الثالث

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻԶ-ԴԻԻԱՆԱԿԱՆ
7-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ, ՓԱՐԻԶ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեայ նստաշրջանի Գ. լիագումարը կայացուց 13-14 Ապրիլ 2009ին, Փարիզ, Ֆրանսա:

Անդրադառնալով շրջաններու միջ-վարչական դիւաններու 7րդ խորհրդաժողովի աշխատանքներուն, որոնք տեղի ունեցած էին նախորդող օրերուն, քննարկելով խորհրդաժողովի օրակարգի նիւթերու արծարծումը եւ անոնց քննութեան եղանակը, ինչպէս նաեւ շրջաններու մասնակցութիւնը ու անոնց ներգործութիւնը եւ ստեղծուած Հ.Մ.Ը.Մ.ի վայել բացառիկ շեքմ մթնոլորտը՝ զայն նկատեց շատ յաջող իրագործում:

Լիագումարը ողջունեց Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի պաշտօնական վերամիացումը միութեան համագաղութային կառոյցին:

Լիագումարը հիմնուելով կազմակերպական յանձնախումբի ուսումնասիրութիւններուն եւ խորհրդաժողովի առաջադրանքներուն վրայ, յարմար նկատեց զարգացնել ցամաքամասային դաստիարակչական աշխատանքները: Հայաստանի մասնաճիւղերու ներքին կեանքը բարելաւելու թելադրութեամբ որոշուեցաւ գործուղումներու ընթացքը:

Սկստական դաստիարակչական երեք ծրագիրներու՝ Վկայեալ կարգի, խմբապետներու վերաորակաւորումի եւ Արարատեան կարգի իրագործման համար, որոշուեցաւ ոչինչ խնայել եւ սատար հանդիսանալ անոնց յաջողութեան ի խնդիր, իսկ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումի համար ձեւակերպուեցաւ անոր նախնական աշխատանքներուն ընդհանուր պատկերացումը եւ ճշդուեցաւ շրջաններու համեմատական մասնակցութեան դրութիւնը:

Վերանայելով համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերուն (1էն 8 Օգոստոս 2009) նախատեսուած ամբողջական ծրագիրը, յետ քննութեան, կազմակերպչական աշխատանքներու յստակացումներու թելադրութեամբ, յարմար նկատուեցաւ ի հարկին գործուղել ներկայացուցիչ մը: Մարզախաղերու կազմակերպչական յանձնախումբի կողքին որոշուեցաւ անյապաղ յառաջացնել թեքնիք յանձնախումբ մը, որ պիտի զբաղի բոլոր մարզախաղերու ներքին կանոնագրութեամբ. նկատի ունենալով որ ձեռնարկին թուականը արդէն հասած է իր վերջին փուլին, առաջադրուեցաւ անդուլ եւ մշտատեւ աշխատանքներու հանգրուան մը:

Քննարկելով «Մարզիկ» պաշտօնաթերթի ցումի աշխատանքները, լաւագոյն միջոցը նկատուեցաւ զայն առաքել անհատական բաժանորդագրութեան ձեւով, իսկ յօդուածագիրներու եւ տեղեկատւական նկարագրականներու համար, թելադրուեցաւ շրջաններու աշխատակիցներուն հետ յարատեւ գործակցութիւն:

Կեդրոնական Վարչութիւնը, իր քառամեայ գործունեութեան կիսուն, համոզումով կը հաստատէ, թէ բոլոր շրջաններու համատեղ գործակցութեամբ եւ զօրակցութեամբ պիտի յաջողի իրագործել իր վրայ պարտք դրուած բոլոր աշխատանքները, ի տես միութեան վեհագոյն նշանաբանին՝ «Բարձրացիր՝ բարձրացուր»ին:

Հ.Մ.Ը.Մ.ի
ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ՄԱՐՍԷՅԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԾԻՒ»Ը ՊԱՇՏՈՆԱՊԷՍ
ՄՏԱՆՁՆԵՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԴՐՕՇՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐՐ



ԹԻՒԻՆ ՆԻՒԹԵՐՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 سارزليک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



4

Հ.Մ.Ը.Մ.ԱՎԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հաղորդագրություն 3
- Կազմակերպչական 4
- Պատգամ 16
- Նոր Հրատարակություններ 19
- Պատմություն 21
- Մասնաձիղէ Մասնաձիղ 25




28



11

ԲԱԺԻՆՆԵՐ

- Միջազգային 23
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԱՆ

ԻՐ. ՏԱՐԻ, 2009, ԹԻ 3 (321)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիզեն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ԱՆԴԱՄ
 Սեդա Պէշլեան
 Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աթո Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամճեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Վ. Աւագեան, Ներսէս Արք.
 Բախտիկեան, Գէորգ Թորոյեան,
 Սալբի Լատոյեան
 Եւ շրջաններու թղթակիցներ:
 Էջարդում - Ջարեհ Չէօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողբի Ձեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԱՆ ՀԱՍՑԵ
 Պուրճ Համուտ, Ծիմիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի
 Եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 Եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա Եւ Աւստրալիա՝ \$55):



ԶԵՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾՈՒԹԻՒՆ

Տենդագին աշխատանքի մէջ է Գ.Ս.Ը.Ս.Ի ընտանիքը: Բոլորը կը պատրաստուին այս ամառ տեղի ունենալիք սկաուտական եւ մարզական մեծ իրադարձութիւններուն. համա-Գ.Ս.Ը.Ս.ական մարզախաղեր, համահայկական խաղեր, սկաուտական Վկայեալ կարգի միջ-ցամաքամասային սեմինարներ (Յալէպ, Փարիզ, Լոս Անձելըս), Գ.Ս.Ը.Ս.Ի Սփիւռք-Յայաստան քոյր մասնաճիւղերու առաջին բանակում:

Ընթացքի մէջ են նաեւ յառաջիկայ ամրան տեղի ունենալիք համա-Գ.Ս.Ը.Ս.ական բանակումին եւ սկաուտական Արարատեան կարգի սեմինարներուն կազմակերպման աշխատանքները: Ու այս բոլորը կը կատարուին կողքին այն մնացեալ աշխատանքներուն, որոնք սովորաբար տեղի կ'ունենան ամէն ամրան, բանակումներու եւ միջմասնաճիւղային խաղերու ձեւով:

Աշխատանքի դաշտը պէտք ունի բոլորին: Սկաուտ թէ մարզիկ, ծնողք թէ վարչական, բարեկամ թէ բարերար, բոլորը ծիգերու առաւելագոյն լարումով հրաւիրուած են իրենց մասնակցութիւնը բերելու նոր սերունդը հոգիով ու մարմնով առողջ պահելու Գ.Ս.Ը.Ս.ական ջանքերուն:

Արդիւնքները կրնան յաջողութեամբ երաշխաւորուիլ, եթէ ունենանք անոնց հասնելու հիմնական միջոցը՝ կազմակերպութեան միջոցը:

Ամէն ինչ կախեալ է մեր կազմակերպութեան: Միութիւններու եւ հաւաքականութիւններու ուժը կազմակերպութեան մէջն է: Նիւթականը, անկասկած, մեծ դեր ունի: Խոհեմ դեկավարութիւնը շատ բան կրնայ ընել միութիւն մը լաւ ձեւով առաջնորդելու համար: Բայց ուժը, հիմնական ու տեւական, միութեան մը ներքին կենսու-

նակութեան, կարգապահութեան եւ միակամութեան մէջն է:

Կազմակերպութիւնը երբ ուժ է կ'ըսենք, կը հասկնանք իրարու շղթայաւած հազարաւոր մարդիկ, խումբերով, յանձնախումբերով եւ վարչութիւններով, որոնք տարիներու իրենց աշխատանքով որոշ նկարագրի տէր, հաւաքական կամքի արտայայտութիւններ են եւ, հետեւաբար, բոլորին ուժին խտացումը կը կազմեն, անձերէն աւելի զօրաւոր, նիւթականէն աւելի վեր եւ անձնական շահերէն գերադաս: Այս յատկութիւնները ունեցող հաւաքականութիւն մը կրնայ ե՛ւ դրամ գրտնել, ե՛ւ դեկավարութիւն պատրաստել, ե՛ւ իր անմիջական շրջանակին մէջ շարժում եւ մթնոլորտ ստեղծել: Ու երբ միութիւն մը այս մակարդակին հասնի, կը դառնայ ուժի աղբիւր, կ'ունենայ ստեղծագործ դեր եւ իր ժողովուրդին համար կը նկատուի կենսական անհրաժեշտութիւն:

Գ.Ս.Ը.Ս.ական մարդը հաւատքով, յարատեւութեամբ եւ պատասխանատւութեան խոր գիտակցութեամբ կը ձգտի իր միութիւնը հասցնել այդ մակարդակին, որովհետեւ 91 տարիներու իր փորձառութեամբ ան լաւ գիտէ, որ միութիւններ եթէ կ'ուզեն յաջողութիւններու հասնիլ, պէտք է կառչին հաւաքական կամքի մը, որ հիմնուած ըլլայ հաւատքի եւ զոհողութեան վրայ, երկարաշունչ ծրագրումի եւ յարատեւ աշխատանքի վրայ: Նման միութիւններու մէջ, ուր անդամներ կը գործեն «մէկը բոլորին եւ բոլորը մէկուն համար» սկզբունքով, փոխադարձ յարգանքը, փոխադարձ զիջողութիւնը, փոխադարձ վստահութիւնը ընդհանուր նկարագիր կը դառնան, կը մէկտեղուին, իրարու կը շղթայուին եւ կը դառնան կազմակերպութեան միջոցը, ինչ որ ուժ է եւ վերանորոգիչ ուժ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, շրջաններու միջ-վարչական դիւաններու 7րդ խորհրդաժողովը տեղի ունեցաւ 9էն 11 Ապրիլ 2009ին, Փարիզ, Ֆրանսա: Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի Վարչութիւնը լաւագոյն ձեւով յաջողուցած էր շրջաններու պատուական հիւրընկալումը:

Խորհրդաժողովին կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ.ի 16 Շրջաններու եւ Մեկուսի շրջաններու վարչութեանց դիւանները, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան հրաւերով կազմակերպական, ծրագրաւորումի եւ մարզախաղերու յանձնախումբերու ներկայացուցիչները եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիրը:

Խորհրդաժողովը առաջին հերթին լսեց շրջաններու իրավիճակին ու գործունեութեանց մասին ամփոփ զեկոյց մը, ապա Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեայ ծրագրին հիմամբ ներկայացուց կատարուած աշխատանքները եւ իրագործումները, ինչպէս նաեւ փոխանցեց իր առաջադրանքները յառաջիկայ ծրագիրներու նկատմամբ:

Խորհրդաժողովը իր յաջորդական նիստերուն ընթացքին լայնօրէն ուսումնասիրեց եւ քննարկեց միութեան կազմակերպական ու ծրագրաւորումի յանձնախումբերուն տեսութիւններն ու ծրագիրներու կարելիութիւնները, ապա լսեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի եւ քոյր մասնաճիւղերու յարաբերութիւններու զարգացումներու զեկոյցը եւ թելադրեց ամրապնդել ու աշխուժացնել անոնց գործունեութեան դաշտը:

Սկաուտական աշխատանքներու բնագաւառին անդրադառնալով, Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուց դաստիարակչական ամբողջական ու լրացուցիչ իրագործելի ծրագիրներ, որոնք կը պարփակեն սկաուտական բարձրագոյն երկու կարգերը՝ Վկայեալ եւ Արարատեան, ինչպէս նաեւ սկաուտական բոլոր խմբաւորումներուն համար ձեռնհաս խմբապետ-խմբապետուհիներ պատրաստելու վերաորակաւորման յատուկ դասընթացք մը: Վկայեալ կարգի տեսական հանգրուանը սկիզբ առած է Յունուար 2009ին, իսկ անոր գործնական հանգրուանը եւ խմբապետներու վերաորակաւորման միացեալ դասընթացքը տեղի պիտի ունենայ երեք ցամաքամասերու մէջ, 2009ի ամրան: Արարատեան կարգի տեսական հանգրուանը պիտի սկսի 2010ի Յունուարին եւ գործնական ու փորձառական հանգրուաններով պիտի աւարտի 2010ի ամրան՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ ընդհանուր բանակումով:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումի (2010ին) աշխատանքներուն հեռատեսութեամբ, նախորդներուն

փորձառութիւններէն օգտուելով կատարուեցան եզրայանգումներ:

Մարզական բնագաւառով Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուց 2009ի ամրան Հայաստանի մէջ տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերու ամբողջական ծրագիրները եւ յայտագիրներու ընթացքը, ինչպէս նաեւ կեցութեան յարմարագոյն դրութիւնները, խումբերու կազմութեան նախապայմանները, ապա ներկայացուցաւ մարզախաղերու բացման հանդիսութեան յայտագիրը եւ փակման Յաղթանակի ճաշկերոյթը: Ձեռնարկի յաջողութեան համար եղան կարծիքներու փոխանակում, ճշդումներ եւ յստակացումներ:

«Մարզիկ» պաշտօնաթերթի առնչութեամբ կատարուեցան դժուարութեանց մատնանշումներ եւ գաւոնք հարթելու կարելիութիւններ: Փոխանցուեցան նաեւ գաղափարներ ու կարծիքներ շրջանները աւելի ներգործօս դարձնելու թերթին տարածման աշխատանքին մէջ:

Վարչական-դիւանակալական աշխատանքները աւելի զարգացնելու դիտաւորութեամբ, Կեդրոնական Վարչութիւնը հիմնուելով ժողովական կանոններու հասկացողութեան վրայ, տուաւ ուղղութիւններ եւ ցուցմունքներ, փոխանցեց թելադրութիւններ ընդհանրապէս յարաբերութեանց մարզերու մէջ, ապա կատարեց լուսաբանութիւններ՝ ընդհանուր կանոնագրութեան որոշ յօդուածներու:

Խորհրդաժողովը անդրադառնալով միութեան փրոթօքոլային համակարգին, կատարեց որոշ յստակացումներ, վերանայելով շքանշաններու տուչութեան եղանակն ու չափանիշը:

Խորհրդաժողովը նկատի ունենալով 2009ի ամրան տեղի ունենալիք համահայկական խաղերը (Հայաստան) եւ 2011ի Սկաուտական Համաշխարհային Ճամպորին (Շուէտ) տրամադրուեցաւ մասնակցիլ որակեալ խումբերով:

Ժողովականները խորհրդաժողովէն համոզումով մեկնեցան՝ հաստատ եւ ամրակուռ քայլերով շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի անվերջ ու կազմակերպուած աշխատանքները, որոնք վճռուած են յաջողութեամբ պսակելու հաւաքական անխնայ ճիգերու եւ զոհողութիւններու յանձնառութեամբ՝ ի փառս եւ ի պանծացում մեր միութեան ու անոր վեհագնաց նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին:

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



2007ԷՆ ԱՍԴԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՉԼԱՅԱՏՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՎ՝

ՄԻՋ-ԴԻԻԱՆԱԿԱՆ Է. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԸՆԹԱՑՔ ԿՈՒ ՏԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ

ՀՄԸՄ-ի Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու միջ-դիւանական խորհրդածողովները ունին մէկուկէս տասնամեակի պատմութիւն: Անոնք կը գումարուին չորս տարին անգամ մը, իւրաքանչիւր Պատգամաւորական Ժողովէ երբ ու տարի ետք եւ կը ծառայեն գնահատումը կատարելու Պատգամաւորական Ժողովի յաջորդած աշխատանքներուն եւ ընթացք տալու այնուհետեւ նախատեսուող ծրագիրներուն:

Յիշեալ խորհրդածողովներու շարքին եօթներորդը տեղի

ունեցաւ 9 եւ 10 Ապրիլ 2009ին, Փարիզի արուարձաններէն Մարնավայելի «Պեսթ Ուեսթ» պանդոկին մէջ, ներկայութեամբ՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան վեց անդամներու, «Մարցիկ» պաշտօնաթերթի խմբագիրին, Կեդրոնական Վարչութեան գործավարին, Կեդրոնական Վարչութեան

Խորհրդածողովին ղեկուցումներ կը ներկայացնեն եղբ. Զրաչ Մետրոպեան (Արեւել. Մ. Նահանգներ), քոյր Մարո Զէշիշեան (Արեւմտ. Մ. Նահանգներ), եղբ. Մոսիկ Թովուզեան (Փանատա), քոյր Մարո Թագեան (Լիբանան)...





կազմակերպչական, ծրագրաւորումի, համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու եւ քոյր մասնաճիւղերու յանձնախումբերու ներկայացուցիչներուն եւ միութեան 16 շրջաններէն 30 ժողովականներու՝ Հայաստանէն, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն, Հարաւային Ամերիկայէն, Գանատայէն, Յունաստանէն, Պուլկարիայէն, Ալմելոյէն, Փարիզէն, Լոնտոնէն, Վիեննայէն, Լիբանանէն եւ Սուրիայէն: Նման խորհրդաժողովի մը առաջին անգամ ըլլալով կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկուայի նորաստեղծ մասնաճիւղին, Կիպրոսի եւ Մարսէյի Հ.Մ.Ը.Մ-«Արծիւ»ի ներկայացուցիչները:

Խորհրդաժողովին աշխատանքները ընթացան վեց նիստերով, որոնց աւարտին ժողովականները Շաբաթ, 11 Ապրիլի

երեկոյեան, ուրախութիւնը ունեցան ներկայ գտնուելու իրենց ի պատիւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կազմակերպած ճաշկերոյթին:

...Եղբ. Սեմ Նահապետեան (Վիեննա), քոյր Սեւան Նազարեան (Փարիզ), եղբ. Արմանտ Աբրամեան (Լոնտոն), եղբ. Արթո Թելլալեան (Կիպրոս), եղբ. Օհանես Օհանեսեան (Ալմելո), եղբ. Զրաչ Շմաւոնեան (Յ.Մ.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.), քոյր Եփրուհի Ահարոնեան (Հարաւային Ամերիկա), եղբ. Էրիք Սարաճեան (Մարսէյ), եղբ. Գարլօ Պերպերեան (Մոսկուա), քոյր Մարլէն Տաքետեան (Յունաստան), քոյր Տիրուհի Գրիգորեան (Պուլկարիա) եւ եղբ. Բաֆֆի Տեր Աբրահամեան (Սուրիա):





Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեան եւ Սիիրան Շիմշիրեան:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ


Խորհրդաժողովը իր աշխատանքներուն սկսաւ Հինգշաբթի, 10 Ապրիլ 2009ի առաւօտեան ժամը 9ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեանի բացման խօսքով:

Եղբ. Պողարեան նախ ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու: Ապա, ան ըսաւ, որ միութենական մեր խտտապահանջութենէն կը բխի նման խորհրդաժողովներու կազմակերպման անհրաժեշտութիւնը: Հ.Մ.Ը.Մ. իր դերակատարութեան մէջ մնալու համար պարտի տեւաբար հաշուետրութիւնը կատարել իր աշխատանքներուն՝ աւելի լաւ ապագայի մը հեռանկարով, եւ նման խորհրդաժողովները կը ծառայեն այդ նպատակին:

Եղբ. Պողարեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց խորհրդաժողովի հիւրընկալ շրջանին՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսիոյ եւ յաջողութիւն մաղթեց ժողովի աշխատանքներուն:

ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ

Բացման խօսքին յաջորդեց Շրջանային եւ Մեկուսի շրջան-



Կեդրոնական Վարչութեան ծրագրաւորումի յանձնախումբի ատենապետ եղբ. Արմեն Աբրահամեան կը ներկայացնէ յանձնախումբին տուեալները:



ներու գեկուցումները՝ Հ.Մ.Ը.Մ.ի 9րդ Պատգամաւորական Ժողովէն (Սեպտեմբեր 2007) ասդին կատարուած աշխատանքներու մասին: Զեկուցաբերները հանդիսացան եղբ. Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ. Նահանգներ), քոյր Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), եղբ. Մոսիկ Թոփուզեան (Գանատա), քոյր Մարո Թազեան (Լիբանան), եղբ. Արմանտ Աբրամեան (Լոստոն), եղբ. Արթո Թեյլալեան (Կիպրոս), եղբ. Օհաննէս Օհաննէսեան (Այմելո), եղբ. Հրաչ Շմաւոնեան (Հայաստան), քոյր Եփրուհի Ահարոնեան (Հարաւային Ամերիկա), եղբ. Էրիք Սարաճեան (Մարսէյ), եղբ. Գարլո Պէրպէրեան (Մոսկուա), քոյր Մարլէն Տաքէսեան (Յունաստան), քոյր Տիրուհի Գրիգորեան (Պուկարիա), եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան (Սուրիա), եղբ. Սէմ Նահապետեան (Վիեննա) եւ քոյր Սեւան Նազարեան (Փարիզ):


Զեկուցումներու օրակարգը, կէսօրուան դադարով միասին, երկարեցաւ մինչեւ յետմիջօրէի ժամը 4: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրը ներկայացուց ատենադպիր եղբ. Կարպիս Գապասագալեան:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՄԵԱՑ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԵԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Կեդրոնական Վարչութեան տեղեկագիրին ընթերցումէն պարզուեցաւ, որ անցնող երկու տարիներուն, Վարչութիւնը գումարած է յիագումար երկու նիստեր՝ 30 Նոյեմբեր-2 Դեկտեմբեր 2007, Փարիզ եւ 2-5 Սեպտեմբեր 2008, Երեւան: Երրորդ յիագումարը տեղի կ'ունենայ դիւանական խորհրդաժողովէն անմիջապէս ետք, Փարիզի մէջ:

Պատգամաւորական ժողովի որոշումներէն թելադրուած՝ Կեդրոնական Վարչութիւնը յառաջացուցած է վեց յանձնախումբեր. կազմակերպչական, ծրագրաւորումի, համահարկ Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու, համացանցի կայքէջի, քոյր մասնաճիւղերու եւ «Մարզիկ»ի:

2008ին, Կեդրոնական Վարչութիւնը արժանապայել շուքով նշած է միութեան հիմնադրութեան 90ամեակը՝ փառաւոր ստեղծատարութեամբ մը Լիբանանի մէջ եւ լաւարանի բաց-



Եղբայրներ Մանուել Մարսիլեան եւ Յրաչ Շմաւոնեան:

ման հանդիսութեամբ՝ Երեւանի մէջ: Նոյն առիթով կատարուած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանի տուչութիւն՝ վաստակաւոր եղբայրներու:

Սկստական մարզին մէջ, Օդոստոս 2008ին, յաջողութեամբ իրագործուած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. համադումարը, Ծաղկաձոր, Հայաստան: Այժմ ընթացքի մէջ են Վկայեալ կարգի եւ խմբապետական վերաորակաւորման դասընթացները, որոնք տեղի պիտի ունենան երեք շրջաններու մէջ՝ Հայէպ (Միջին Արեւելքի մասնաճիւղերուն համար), Փարիզ (Եւրոպայի մասնաճիւղերուն համար) եւ Լոս Անճելըս (Մ. Նահանգներու, Գանատայի եւ Հարաւային Ամերիկայի մասնաճիւղերուն համար):

Իբրեւ կազմակերպչական իրագործում, Սեպտեմբեր 2008ին, միութիւնը իր 100րդ մասնաճիւղը հիմնած է Մոսկուայի մէջ:

Այս բոլորին արձագանգը եղած են միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին 15 թիւերը: «Մարզիկ» Պատգամաւորական Ժողովէն ետք վերադարձած է ամսական հրատարակութեան իր նախկին դրութեան: Թերթին վարչութեան, առաջին անգամ ըլլալով, մաս կազմած են Լիբանանէն դուրս դաշնակց քոյրեր եւ եղբայրներ: Թերթին խմբագրականները անգլերէնի թարգմանուելով տեղադրուած են միութեան համացանցի կայքէջին մէջ: Թերթը, PDF օրինակով, ամբողջութեամբ ներկայացուած է նոյն կայքէջով:

Պատգամաւորական Ժողովէն ետք, Կեդրոնական Վարչութիւնը հրատարակած է միութեան վերամշակուած ծրագիր-կանոնադիրը եւ նոր չափերով պատրաստած է Հ.Մ.Ը.Մ.ի եւ սկստականութեան դրօշակները:

«ՄԱՐԶԻԿ»Ի ՕՐԱԿԱՐԳԸ

Շրջաններու եւ Կեդրոնական Վարչութեան զեկուցումներէն ետք, առանձին զեկուցում մը ներկայացուց «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան՝ թերթին աշխատանքներուն եւ դիմագրուած մարտահրաւէրներուն շուրջ:

Եղբ. Աւագեան յայտնեց, որ «Մարզիկ» երբ 29 տարի առաջ

կը ծնէր, ան յստակ պահանջի մը արդիւնք էր: Թերթին ծնունդ տալը սակայն բան մըն էր, ապրեցնելը՝ այլ բան: Թերթը անցնող տասնամեակներուն ապրեցաւ բովանդակութեան, մատուցման ձեւի եւ ցրումի զանազան հանդրուաններ: Ներկայ ձեւը Տրդ. Պատգամաւորական Ժողովին կողմէ ճշդուած ձեւն է: Գրդ. Պատգամաւորական Ժողովը նոյնութեամբ պահեց զայն:

Եղբայրը իր զեկուցումին մէջ երկարօրէն խօսեցաւ թերթը ոտքի պահող նախաձեռնութիւններու մասին («քաջալեր անդամ»ներու դրութիւն, ծանուցումներ, թիւերու եւ էջերու հովանաւորութիւններ...) եւ նշեց, որ «Մարզիկ»ի դիմագրուած դժուարութիւնները ունին ընդհանրական բնոյթ. հայախօսութեան նահանջ, գիրքի եւ մամուլի հանդէպ նոր սերունդի անտարբերութիւն, արհեստավարժ մօտեցումի բացակայութիւն եւ այլն: Ան շեշտեց, որ «Մարզիկ» Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան շտեմարանն է, միութեան տարբեր շրջանները իրարու կապողը, Սփիւռքի հայելին ձեւով մը, որ նաեւ դաստիարակչական կարեւոր աղբիւր է իր խմբագրականներով եւ առաջնորդող յղուածներով:

Հետեւաբար, եղբ. Աւագեան թելադրեց թափ տալ «Մարզիկ»ի տարածման աշխատանքներուն, միաժամանակ մտածելով զայն արհեստավարժ առանձին կառույցի մը վերածելու կարելիութեան մասին:



Եղբ. Գառնիկ Սկրտիչեան:



Եղբոր գեկուցումն էտք տեղի ունեցաւ քննարկում՝ «Մարգիկ»ի եւ ընդհանրապէս միութենական քարոզչութեան նորագոյն ձեւերուն մասին:

Այնուհետեւ, խորհրդաժողովին առաջին օրուան աշխատանքները իրենց լրումին հասան երեկոյեան ժամը 7ին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԱՐԶԻ ԾՐԱԳՐՈՒՄՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եւ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական կազմակերպչական յանձնախումբի ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան խորհրդաժողովին ներկայացուց իր յանձնախումբին պատկերացումը՝ աւելի կենսունակ եւ առողջ կազմակերպական կառուցի մը մասին: Ան յատկապէս կանգ առաւ միութեան կազմալոյծ շրջաններու վերականգնման եւ նոր շրջաններու մէջ մասնաճիւղերու ստեղծման անհրաժեշտութեան վրայ:

Խորհրդաժողովին երկրորդ օրը սկսաւ սկառտական ծրագիրներու մասին եղբ. Կարպիս Գապասազալեանի գեկուցումով: Եղբ. Գապասազալեան Կեդրոնական Վարչութեան սկառտական աշխատանքներուն ներկայացուցիչն է եւ տարիէ մը ի վեր լծուած է Վկայեալ եւ Արարատեան կարգերու կազմակերպման:

Եղբ. Մկրտիչեան երկարօրէն խօսեցաւ Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն թափ տուող ծրագիրներուն մասին եւ անդրադարձաւ միութենական ընդհանուր երեւոյթներու: Ան ըսաւ, որ այսօր գրեթէ ամէնուրեք փոխուած է ազգային հասկացողութիւնը: Մենք ունինք գնդակին հետ դաստիարակութիւն փոխանցելու հարց: Ի՞նչ կը սպասենք արդեօք մեր մարզիկներէն: Հայ մարզիչներու տագնապը զգալի է: Գաղափարական պատրաստութեան հարցը՝ նոյնպէս: Օրէ օր կը պակսի միութենական ապրումը եւ մեծ ընելիք կայ միութենական գիտելիքներու եւ շունչի փոխանցման իմաստով: Չի բաւեր հոգիով հայ անդամներ ունենալ, համոզում, պատրաստութիւն եւ անդուլ աշխատանք պէտք է: Բաներ, որոնք անհրաժեշտ են կենսունակ եւ առողջ մասնաճիւղեր ունենալու համար:

Իր գեկուցումին մէջ, եղբ. Գապասազալեան խօսեցաւ 2009ին նախատեսուած սկառտական միջ-ցամաքամասային սեմինարներուն մասին, որոնք պիտի ծառայեն շրջաններու մէջ Վկայեալ կարգի պատրաստութեան եւ խմբապետներու վերաորակաւորման: Իբրեւ յաջորդ հանգրուան, 2010ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումին ընթացքին, միութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, պիտի կատարուի Արարատեան կարգի տուչութիւն՝ Վկայեալ կարգ ունեցող, շրջաններու գլխաւոր խմբապետ-խմբապետուհիներու, որոնք տեսական դասընթացք մը պիտի ունենան Յունուար 2010ին, իսկ գործնական բանակում մըն ալ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումէն առաջ:

Եղբ. Մկրտիչեանի գեկուցումը առիթ տուաւ բաւական լայն տեսակէտներու փոխանակման: Շրջաններու ներկայացուցիչները արտայայտեցին մտահոգութիւններ եւ փորձեցին գտնել լուծումներ՝ օգտուելով իրարու եւ նախորդներու փորձառութիւններէն:

Եղբ. Գապասազալեան խօսեցաւ նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գրդ բանակումի (Յուլիս 2010) կազմակերպման աշխատանքներուն մասին եւ յիշեցուց, որ բանակումին յաջողութեան համար մասնակիցներու առաւելագոյն թիւ ճշդուած է 450: Հետեւաբար, շրջանները բանակումին պիտի մասնակցին նախօրոք իրենց համար ճշդուած մասնակիցներու թիւով:

Իր գեկուցումին աւարտին, եղբ. Գապասազալեան պատասխանեց ժողովականներու հարցումներուն:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌԻ ԳՈՅՐ ՄԱՄՆԱՃԻՒՂԵՐ

Հայաստան-Սփիւռք քոյր մասնաճիւղերու դրուածքներն ուր էջ, սակայն Յրդ Պատգամաւորական Ժողովէն ասդին ան թեւակոխած է ծրագիրներու գործնականացման փուլ: Այս մասին խորհրդաժողովին զեկուցեցին Կեդրոնական Վարչութեան յիւանդոր ներկայացուցիչ եղբայր Մանուէլ Մարսիլեան (Արեւմտեան Մ. Նահանգներ) եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան (Հայաստան): Փառուրդ փոյնթի օգտագործումով անոնք ներկայացուցին ցարդ իրականացած աշխատանքները. միատեսակ տարազներու ապահովում Հայաստանի սկսուածներու, քոյր մասնաճիւղերու բանակում (Յուլիս 2009ին) եւ այլեւայլ ծրագիրներ: Եղբ. Շմաւոնեան այս առիթով պարզեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կարիքները եւ ընդհանրապէս սկսուածութեան Հայաստանի աշխատանքներուն դիմագրաւած դժուարութիւնները. կեդրոններու չգոյութիւն, խմբապետներու հարց (տրուած ըլլալով որ խմբապետներ 18 տարեկանին կը մեկնին բանակ եւ իրենց տեղը կը մնայ թափուր), նիւթականի դժուարութիւն եւ այլն:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.-ԱԿԱՆ ՏՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

Խորհրդաժողովին աշխատանքներէն կարեւոր բաժին մըն ալ յատկացուեցաւ այս ամառ Հայաստանի մէջ տեղի ունենա-

լիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ մարզախաղերուն: Եղբ. Մանուէլ Մարսիլեան մարզախաղերու յանձնախումբի ատենապետի հանգամանքով սպառիչ զեկուցում մը տուաւ խաղերուն մասին. որդեգրուած մարզախաղեր, մասնակցութեան պայմաններ, թեքնիք մանրամասնութիւններ, յայտագիր, պարենաւորման եւ փոխադրութեան հարցեր, մասնակցութեան սակեր, շրջաններէ ակնկալութիւններ եւ այլն:

Ձեկուցումը ընդգրկեց բաւական նորութիւններ ներկաներուն, որոնք յաւելեալ հարցումներով ստացան անհրաժեշտ լուսարանութիւններ:

ՄԻՈՒԹԵԱՆ ԱՊԱԳԱՆ՝ ԾՐԱԳՐԱԽՈՐՈՒՄԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՈՎ

Յաջորդ զեկուցումը իր տեսակին մէջ աննախընթաց էր միութեան պատմութեան մէջ: Յրդ Պատգամաւորական Ժողովի որոշումով յառաջացած ծրագրաւորումի յանձնախումբը, ատենապետ եղբ. Արմէն Աբրահամեանի միջոցով, փառուրդ փոյնթի խորհրդաժողովին ներկայացուց մանրամասն տեղեկագիր մը՝ միութեան մարդուժի կարողականութեան մասին: Ներկաները ծանօթացան Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջաններու անդամական պատկերներու վերջին տարիներու կրած վերիվայրումներուն: Թիւերուն ընկերացան տուեալ գաղութներու հայրութեան թիւին եւ կացութեան մասին գնահատումներ:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>

Եղբ. Աբրահամյանի հաստատեց, որ ծրագրաւորումի աշխատանքը տակաւին իր սկզբնական փուլին մէջն է: Տեղեկութիւններու հաւաքը կը շարունակուի եւ մինչեւ 10րդ Պատգամաւորական ժողով կարելի պիտի ըլլայ յստակ եզրակացութիւններու յանգիլ, թէ այսօր ի՞նչ կարողականութիւններու տէր է Հ.Մ.Ը.Մ.: Դէպի ո՞ր կ'ուղղուի ան եւ ի՞նչպէս:



Կեդրոնական վարչութեան անդամներ կը ռետելըն խորհրդաժողովի աշխատանքներուն:

Թացքին համար:

Եղբ. Կարպիս Գապասազալեան ներկայացուց միութեան ընդհանուր կանոնադրութեան կարգ մը յօդուածներու կապուած լուսարանութիւններ: Եղբայրը խօսեցաւ նաեւ միութեան փրօթփորլային կանոններու գործարրութեան անհրաժեշտութեան եւ շքանշաններու տուչութեան եղանակին մասին:

Հուսկ, խորհրդաժողովը լսեց սկառուտական համաշխարհային ճէմպորիին (Շուէտ, 2011) եւ այս ամառ տեղի ունենալիք համահայկական ֆութպոլի եւ պասքէթպոլի մրցաշարքին մասին (Օգոստոս 2009, Երեւան) Կեդրոնական վարչութեան զեկուցումներն ու թելադրանքները:

Աւարտին, շրջաններու ներկայացուցիչները հանդէս եկան սրտի խօսքերով եւ շնորհակալութիւն յայտնեցին խորհրդաժողովը կազմակերպող Կեդրոնական վարչութեան եւ զայն հիւրըկալող Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան:

Խորհրդաժողովը իր աշխատանքները աւարտեց Ուրբաթ, 11 Ապրիլի երեկոյեան ժամը 7ին, յուշանուէրներու փոխանակումով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Խորհրդաժողովը իր աշխատանքները աւարտեց Ուրբաթ, 11 Ապրիլի երեկոյեան ժամը 7ին, յուշանուէրներու փոխանակումով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ՄՆԱՑԵԱԼ ՕՐԱԿԱՐԳԸ

Զեկուցումներու աւարտէն ետք, խորհրդաժողովը իր աշխատանքները շարունակեց Կեդրոնական վարչութեան փոխանցումներով եւ ընդհանրական մտահոգութիւն ներկայացրնող կարգ մը հարցերու քննութեամբ:

Արդարեւ, Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան ներկայացուց վարչական, դիւանակալական աշխատանքներու կապուած նկատողութիւններ: Ան կատարեց տեղին ցուցմունքներ՝ աշխատանքներու հեղասահ ըն-

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann Arthus-Bertrand / Terre vue du Ciel. Licence 075 960031 - Studio V.K.M. 2005-2005

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ՄԻՋ-ՎԱՐՉԱԿԱՆ ԴՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ Ի ՊԱՏԻՒ Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

Հ.Մ.Ը.Մ.-ի միջ-վարչական Դրդ խորհրդատու-վին փակում էն օր մը ետք, Շաբաթ, 11 Ապրիլ 2009ին, խորհրդատու-վին մասնակիցները իրարու եւ հիւրընկալ շրջանին՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին հրաժեշտ տուին անմոռանալի երեկոյով մը, որ խօսուն ապացոյցը եղաւ խորհրդատու-վին աշխատանքներուն ընթացքին ստեղծուած ազգային-միութենական այն ջերմ ոգիին, որ բնորոշ է Հ.Մ.Ը.Մ.-ին:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան հրաւերով, խորհրդատու-վին կազմը, շուրջ 45 քոյրեր եւ եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ վեց եղբայրներու գլխաւորութեամբ, ներկայ գտնուեցաւ մեծաշուք ճաշկերոյթի մը, որ տեղի ունեցաւ ԵՈՒՆԵՍԿՕ-ի Փարիզի կեդրոնատեղիին սրահներէն մէկուն մէջ: Ճաշկերոյթը իրենց ներկայութեամբ պատուեցին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի Թեմի Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան, Սամուէլ Մուրատ վարժարանի տնօրէն Հայր Յարութիւն Պղտիկեան եւ Ֆրանսայի մօտ Հայաստանի դեսպան Համէթ Գասպարեան: Ներկաներու շարքին




էին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի անդամներ, բարեկամներ ու բարերարներ:

Եկեղեցական Հայրերու միացեալ աղօթքէն ետք, ճաշկերոյթին պաշտօնական բացումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան: Ան ողջունեց հիւրերը եւ յայտնեց, թէ հայ ժողովուրդը երախտապարտ է Հ.Մ.Ը.Մ.-ին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. ուր որ գնաց, պահեց մեր ժողովուրդին ազգային-բարոյական արժէքները: Հ.Մ.Ը.Մ. միայն ֆութպոլ է, սկաւտութիւն է, շարունակեց եղբ. Պահարեան, այլ անոնցմէ շատ աւելին է. Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց է, սերունդներ կերտող եւ հայութիւնը պահպանող: «Հ.Մ.Ը.Մ.ը մեզի սորվեցուց յաղթանակի ծարաւը եւ հպարտութեան զգացումը», ըսաւ եղբ. Պահարեան եւ իր խօսքը փակեց բարի վայելում մաղթելով ներկաներուն:



Այնուհետեւ, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիա Պողարեան: Եղբայրը Կեդրոնական Վարչութեան եւ շրջաններու ներկայացուցիչներուն անունով շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.-



Սամուել Մուրատ վարժարանի տնօրեն Հայր Յարութիւն Պատիկեան կը փոխանցէ իր խօսքը:

Ը.Մ.-Ֆրանսիոյ՝ խորհրդաժողովին իր լաւ հիւրընկալութեան համար: Իր կարգին, ան շեշտեց, որ Հ.Մ.-Ը.Մ.ը մեծ դպրոց է, ուր նման խորհրդաժողովներով եւ անոնցմէ բխած աշխատանքներով կը կերտուի վաղուան մարզն ու հայր: Հ.Մ.-Ը.Մ. միաժամանակ մեծ ընտանիք է, որուն անդամները ցրուած են աշխարհի չորս կողմը, աւելցուց եղբ. Պողար-

եան եւ շեշտեց, որ ընտանիքին անդամները մեծ գուրգուրանք ունին իրարու եւ այն բոլոր արժէքներուն հանդէպ, որոնք ընտանիք մը կը պահեն առողջ եւ ամուր:

Իր խօսքին աւարտին, եղբ. Պողարեան Կեղրոնական Վարչութեան յատուկ յուշանուէրով պատուեց Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը՝ խորհրդաժողովի յաջողութեան իր բերած նպաստին համար: Յուշանուէրը ան յանձնեց վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեանին:

Ապա, ճաշկերոյթը շարունակուեցաւ երգով, պարով ու մեծ ոգեւորութեամբ: Ստեղծուած խանդավառ մթնոլորտին մէջ, Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի հայանուէր աշխատանքներուն ի նպաստ կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ, զորս պարբերաբար յայտարարեց եղբ. Վարանդ Պաղտասարեան: Մթնոլորտի ճոխացման իրենց մասնակցութիւնը բերին երգելու սէր ու շնորհ ունեցող կարգ մը եղբայրներ, որոնք եղան օրուան յայտնութիւնները:

Այս առիթով խօսք առաւ նաեւ Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի սկաուտական հաւաքները հիւրընկալող Սամուել Մուրատ վարժարանի տնօրէն Հայր Յարութիւն Պատիկեան: Ան հարց տուաւ,



Հ.Մ.-Ը.Մ. Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան գնահատանքի յուշանուէր մը կը յանձնէ Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեանին:

որ «մեր դուները եթէ Հ.Մ.-Ը.Մ.ին պիտի չբանայինք, որո՞ւ պիտի բանայինք»:

Հայր Պատիկեան մեծապէս գնահատեց Հ.Մ.-Ը.Մ.ի դերը գաղութներուն մէջ եւ նշեց, որ Հ.Մ.-Ը.Մ. ազգն ու մշակոյթը պահող ազդակներէն մէկն է:

Ապա, Հ.Մ.-Ը.Մ.ի սկաուտական աշխատանքներուն հիւրընկալութեան մասին խօսելով, Հայր Պատիկեան յայտնեց, որ Հ.Մ.-Ը.Մ.ին հետ վարժարանին գործակցութիւնը երկու տարեկան է: Սակայն մաղթանքս է, որ այդ գործակցութիւնը կիրականօրեայ չըլլայ, այլ ամբողջ կեանք մը ըլլայ, որովհետեւ այս միութիւնը վեհ առաքելութեան թուած միութիւն մըն է:

Հայր Պատիկեանի գօտեպնդիչ վկայութենէն ետք, տեղի ունեցաւ Հ.Մ.-Ը.Մ.ի կարկանդակի հատում, որմէ ետք ներկաներու խանդավառութիւնը գագաթնակէտին հասաւ ազգային-հայրենասիրական երգերով:

Երեկոն փակուեցաւ անջնջելի տպաւորութիւններով, նման հանդիպումներով Հ.Մ.-Ը.Մ.ն ու հայութիւնը աւելի հզօրացած տեսնելու կենացներով:



ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՄԻԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԱՄԲՈՂՋԱՅՆԵԼՈՎ

ՄԱՐՍԷՅԻ Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԾԻԻ»Ը ՊԱՇՏՈՆԱՊԷՍ ՍՏԱՆՁՆԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԴՐՕՇՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ



12 Ապրիլ 2009ին, Մարսէյի Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ը ամբողջացուց միութեան վերամիացման գործընթացը, յատուկ հանդիսութեամբ մը Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ստանձնելով միութեան դրօշն ու կանոնագիրը:

Մանօթ է, որ Յունուար 2007ին, Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի ընդհանուր ժողովի դիմումին ընդառաջելով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը ընդունեց անոր վերամիացումը միութեան, զայն հռչակելով Հ.Մ.Ը.Մ-ի 99րդ մասնաճիւղ:

Վերամիացման գործընթացին ամբողջացումը, միութեան դրօշին եւ կանոնագիրին ստանձնումով, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի միջ-վարչական դիւանական Դրդ խորհրդատուութեան մը Մարսէյ այցելութեամբ: Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան, Կեդրոնական Վարչութեան ատենադրպիր եղբ. Կարպիս Գապասագարեան եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան:

Այս առիթով կազմակերպուած հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի ակումբին մէջ, ներկայութեամբ Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Զարեհ Մինասեանի, Հ.Յ.Դ. Մարսէյի կոմիտէութեան



անդամներու եւ Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի վեթերան անդամներու:

Հանդիսութեան սկիզբը, մասնաճիւղի ատենապետ եղբ. Ֆիլիպ Ղազարեան ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութեան Մարսէյ այցելութիւնը եւ յայտնեց, թէ պատիւ է մարմնակրթական նման միութեան մը մաս կազմելը: Հ.Մ.Ը.Մ-ը Մարսէյի մէջ հիմնուած է 1924ին, - նշեց ան, - ու թէ եւ պայմաններու բերումով ան 33 տարի մաս չէ կազմած միութեան, սակայն միշտ հաւատարիմ մնացած է անոր դաւանած սկզբունքներուն եւ ազգային արժէքներուն: Այսօր, մասնաճիւղը ուրախ եւ հպարտ է, որ կազմակերպական իր վերամիացումը կ'ամբողջանայ այս հանդիսութեամբ եւ հանգամանաւոր ներկայութեամբ:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենադրպիր եղբ. Կարպիս Գապասագարեան մասնաճիւղին վարչութեան փոխանցեց միութեան կանոնագիրը եւ արտասանեց

Հ.Մ.Ը.Մ-ի դերն ու առաքելութիւնը ներկայացնող խօսք մը: Ան ըսաւ, որ մասնաճիւղը անցեալին ունեցած է բեղուն գործունէութիւն: Յեղասպանութենէն ճողոպրած առաջին սերունդը Մարսէյի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ հիմնելով՝ անոր մէջ գտած է հայապահպանման իր ուժը: Նուիրեալ այդ սերունդը Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը պահած է սրբութեան նման, կեանքին զնով տէր կանգնելով անոր: Այսօր, նոր սերունդը, շարունակեց եղբ. Գապասագալեան, - այդ դրօշը դարձեալ բարձր պիտի պահէ եւ հպարտ պիտի զգայ Հ.Մ.Ը.Մ-ական իր պատկանելիութեամբ:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան: Ան ողջունեց երկար տարիներու ակամայ բացակայութենէ ետք մասնաճիւղին վերամիացումը միութեան եւ յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ-ի անդամակցութիւնը կ'ենթադրէ պարտաւորութիւններ եւ իրաւունքներ:

Իր խօսքին աւարտին, եղբ. Պողարեան մասնաճիւղին վարչութեան յանձնեց Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը: Ապա, Կեդրոնական Վարչութեան անունով ան յուշանուէր մը յանձնեց Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի վարչութեան:



Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան յուշանուէր մը կը յանձնէ Հ.Մ.Ը.Մ.-«Արծիւ»ի վարչութեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգումով:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան Մարսէյ այցելութեան միօրեայ յայտագիրը եղաւ բեղուն: Եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Կարպիս Գապասագալեան եւ Վիգէն Աւագեան Հ.Մ.Ը.Մ-ի հանդիսութենէն առաջ եւ ետք այցելութիւններ տուին Մարսէյի ազգային կառույցներ՝ Հ.Յ.Դ. «Հրայր Մարուխեան» ակումբ, եկեղեցի, Համազգայինի Ճեմարան եւ Ժան Կարպիս Արթինի «Արամ» հաստատութիւն (Association pour la Recherche et l'Archivage de la Mémoire Arménienne-ARAM):

Այցելութիւնները առիթ մը եղան մօտէն ծանօթանալու գաղութին ազգային մարմիններուն եւ անոնց գործունէութեան: Քննարկուեցան շրջանէն ներս Հ.Մ.Ը.Մ-ի գործունէութեան թափ տալու կարելիութիւնները եւ փոխադարձ գործակցութեան հեռանկարները:



Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԾԻՒ»Ը ԹՈՒՒԿԱՆ ՆԵՐՈՎ

1924 Օգոստոս 21- Պոլսոյ ծանօթ Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Վազգէն Անդրեասեան, Սուքիաս Սուքիասեան, Վահրամ Ասլանեան, Մկրտիչ Փափագեան եւ Օննիկ Փափագեան կը հիմնեն Հ.Մ.Ը.Մ-ի Ֆրանսայի առաջին մասնաճիւղը՝ Մարսէյի մէջ:

1925 Մարտ 10- Մասնաճիւղը կը կազմակերպէ իր առաջին մարզական ելոյթը:

1925 Ապրիլ 2- Թիւ 4410 պաշտօնագիրով մասնաճիւղը կ'ապահովէ իր պետական ծանաչումը:

1825 Յուլիս- Մասնաճիւղին աթլետիկ մրցումներուն ժիրայր խթիկեան կը հաստատէ գունտ նետելու Ֆրանսայի մրցանիշ (12.21 մեթր):

1926ի սկիզբ- Մասնաճիւղը կ'ունենայ աղջկանց բաժին, Դպրոցատէր Տիկնանց Վարժա-

րանի շուրջ 75 աշակերտուհիներու մասնակցութեամբ եւ աթլետիքային ու պասքետպոլի կիրարկումով:

1926 Փետրուար 13- Թիւ 304 պաշտօնագիրով մասնաճիւղին աղջկանց բաժինն ալ կը ստանայ պետական ճանաչում:

1928 Փետրուար 12- 16 նորընծայ սկաուտներ, իբրեւ կնքահայրեր, կը մասնակցին Շաթօ Տը Ֆլէորի եկեղեցւոյ օծման արարողութեան, ձեռամբ Պալաքեան եպիսկոպոսին:

1930 Սեպտեմբեր 26- Կը կատարուի մասնաճիւղին սեփական դաշտին բացումը:

1930-1931 տարեշրջան- Մասնաճիւղին ֆութպոլի խումբը կը բարձրանայ Ա. դասակարգ եւ կը մասնակցի Ֆրանսայի ախոյեանութեան մրցաշարքին:

1939- Համաշխարհային Բ. պատերազմի բռնկումով, մասնաճիւղը կը մատնուի անդամալուծութեան:

1946- Մասնաճիւղը կը վերակազմուի Մարսէյի արուարձաններու 13 խումբերու միացումով:

1964- Մասնաճիւղին ֆութպոլի խումբերը կը միանան շրջանի Արծիւ Մարզական Միութեան եւ կը կոչուին Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ»: Անուանափոխութեան չենթարկելի Սէնթ Անթուան թաղամասի խումբը, որ կը շարունակէ գործել Ս.Տ.Յ. Արմենիեն անունով:

1974 Մարտ- Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բիւզանդ Թորիկեան կ'այցելէ Մարսէյ եւ տեղւոյն պատասխանատուներուն կը ներկայացնէ Հ.Ս.Ը.Մ.ի համագաղութային կառոյցի ստեղծման պայմանները եւ Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ»ին միութեան նոր կառոյցին անդամակցութեան անհրաժեշտութիւնը:

1974 Դեկտեմբեր 13- Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ» կը բացակայի Հ.Ս.Ը.Մ.



Մ.ի համագաղութային կառոյցի ստեղծման Ա. Պատգամաւորական ժողովէն եւ ակամայ դուրս կը մնայ միութեան մեծ ընտանիքէն:

2005 Մայիս 19- Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան կ'այցելէ Մարսէյ եւ Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ»ի պատասխանատուներուն հետ կը քննէ Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքին վերամիացման կարելիութիւնները:

2006 Յունիս 20- Հ.Ս.Ը.Մ.-«Ար-

ծիւ»ի անդամական ընդհանուր ժողովը վերատեսութեան ենթարկելով իր ներքին կանոնադրութիւնը, կ'որոշէ նամակով մը Հ.Ս.Ը.Մ.ի վերամիացման դիմում կատարել Կեդրոնական Վարչութեան:

2007 Յունուար 24- Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ընդառաջելով Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ»ի ընդհանուր ժողովի դիմումին, կ'ընդունի անոր միացումը միութեան, զայն հռչակելով Հ.Ս.Ը.Մ.ի 99րդ մասնաճիւղը:

2007 Սեպտեմբեր 19-23- Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ» խորհրդակցական ձայնով երկու ներկայացուցիչով կը մասնակցի Հ.Ս.Ը.Մ.ի 9րդ Պատգամաւորական ժողովին, Հայաստան:

2009 Ապրիլ 9-11- Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ» ներկայացուցիչով մը կը մասնակցի Հ.Ս.Ը.Մ.ի միջվարչական դիւանական 7րդ խորհրդաժողովին, Փարիզ:

2009 Ապրիլ 12- Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւն մը Մարսէյ այցելելով կ'ամբողջացնէ մասնաճիւղին վերամիացման օրինական գործընթացը՝ միութեան դրօշն ու կանոնագիրը հանդիսաւորապէս յանձնելով Հ.Ս.Ը.Մ.-«Արծիւ»ի վարչութեան:



Ի ՇԱՀ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒՄ

2009ը կը նշէ Զ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղի հիմնադրութեան 85ամեակը: Այս առիթով, յոբելեալ մասնաճիւղը կազմակերպեց ճաշկերոյթ մը, որուն ընթացքին խօսք առաւ Զ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան: Ստորեւ՝ եղբոր խօսքը:



Օրացոյցի էջերուն մէջ թուականներ կան, որոնք տարբեր գոյնով գրուած կ'ըլլան եւ տարբեր իմաստ մը կը փոխանցեն մարդուն:

Հայ մարդուն եւ մանաւանդ Հ.Ս.Ը.Ս.ականին համար օրացոյցը լեցուն է նման թուականներով, որոնցմէ մէկը 1924 թուականն է:

Պատմական թուական մը, որովհետեւ ան կը նշէ Լիբանանի հայութեան կազմակերպման առաջին եւ կարեւոր թուականներէն մէկը՝ Հ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղին հիմնադրութեամբ:

85 տարի առաջ էր այդ թուականը: Այսօր, 85 տարի ետք, նոյն Պէյրուսի մասնաճիւղը մեզ համախմբած է այստեղ, ճաշկերոյթով մը յիշատակելու անցնող 85 տարիներու իր վաստակը:

85 տարին քիչ ժամանակ չէ: Ան իր մէջ կը խտացնէ 85 տարւան յարգանք ու ողջո՛յն բոլոր անոնց, որոնք եկան ու անցան այս մասնաճիւղին յարկէն:

Հ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղը Միջին Արեւելքի առաջին մասնաճիւղն է, Պոլսոյ մէջ միութեան հիմնադրութենէն ետք: Անո՛ր կ'երթայ պատիւը Հ.Ս.Ը.Ս.ը առաջին անգամ արաբական աշխարհին ծանօթացնելու, միութեան մարզական եւ սկստակական գործունէութիւնը Լիբանանի մէջ տարածելու:

Ո՞վ կրնայ ուրանալ այս մասնաճիւղին անփոխարինելի դերը Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի կառուցին մէջ: Մեծեր եկան ու անցան անոր շարքերէն եւ մեծագործութիւններ ձգեցին իրենց ետին: Յարգանք բոլորին:

Ցնցումներ շատ ապրեցաւ այս մասնաճիւղը, սակայն տոկաց շնորհիւ միութենական իր ամուր արմատներուն, իր անդամներուն անխախտ ոգիին: Տոկաց եւ իբրանանեան չափանիշով օրինակ դարձաւ տեղական սկստակական թէ՛ մարզական միութիւններուն,

երկար տարիներ ախոյեանութիւններ նուաճելով, բաժակ, մետալ, ազգային հպարտութիւն եւ խանդավառութիւն ապահովելով յաջորդական սերունդներու: Առանց Հ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղին տարբեր պիտի ըլլար լիբանանահայ կեանքը: Տարբեր պիտի ըլլայինք մենք: Պէյրուսը մեզի տուաւ ազգային արժանապատուութեան, յաղթանակի եւ վերապրումի ամէնէն գեղեցիկ օրինակները:

Չափազանցութիւն չթուի, եթէ բանք, որ Հ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղը մեծագոյնն է միութեան մէջ: Ան «աշխարհակալ» մասնաճիւղ է, որովհետեւ ուր որ երթաք, աշխարհի ո՛ր անկիւնը որ հասնիք, եթէ Հ.Ս.Ը.Ս.ի մասնաճիւղի մը հանդիպիք, դուք հոն անպայման պիտի հանդիպիք Պէյրուսի մասնաճիւղի նախկին անդամներու, որոնք տարիներու իրենց փորձառութիւնը տարած են հեռաւոր ափեր:

Պէտք է վկայել նաեւ, որ Պէյրուսի մասնաճիւղը հանդիսացած է գլխաւոր հնոցը Հ.Ս.Ը.Ս.ի համագաղութային կառուցին ստեղծման: Իր ակումբին մէջ գումարուած են միութեան համագաղութային կառուցի հիմնադրութեան ժողովները: Իր շարքերէն ելած են յաջորդական կեդրոնական Վարչութիւններու անդամները: Պէյրուսը, այսպէսով, եղած է բոլորին համար, բոլորին հետ:

Ու պատի՛ւ բոլորին, Պէյրուսը Պէյրուսի պահողին: Կը խոնարհինք անդարձ մեկնածներու յիշատակին: Կը քաջալերենք նորերը եւ կը մաղթենք, որ յոբելեանական նման ձեռնարկները առիթներ ըլլան իրարու շուրջ բոլորուելու, մասնաճիւղին հետ աւելիով ըլլալու, ի շահ միութեան գերագոյն արժէքներուն եւ հայ ժողովուրդի բոլոր իղձերուն:

Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքը այսօր ձեզի հետ է սիրելի քոյրեր եւ եղբայրներ: 85 տարիներու ձեռքեր թող շարունակուի, մեծնա՛յ եւ իր յաղթական պսակին արժանանայ հայութեան պատի՛ւ բերող Հ.Ս.Ը.Ս.ական նորանոր իրագործումներով:

Զ.Ս.Ը.Ս.ի Պէյրուսի մասնաճիւղը Միջին Արեւելքի առաջին մասնաճիւղն է, Պոլսոյ մէջ միութեան հիմնադրութենէն ետք: Անո՛ր կ'երթայ պատիւը Զ.Ս.Ը.Ս.ը առաջին անգամ արաբական աշխարհին ծանօթացնելու, միութեան մարզական եւ սկստակական գործունէութիւնը Լիբանանի մէջ տարածելու:

Ո՞վ կրնայ ուրանալ այս մասնաճիւղին անփոխարինելի դերը Զ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի կառուցին մէջ: Մեծեր եկան ու անցան անոր շարքերէն եւ մեծագործութիւններ ձգեցին իրենց ետին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԱՐԺԷՔ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՏՐԱԼԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՂՔ. ՎԻԳԷՆ ՔՈՐԹԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ՍԻՏՆԻ)

Հայ Սփիւռքին համար 2008ը կարեւոր թուական մը եղաւ: Վեց հարիւր տարուան պետականութեան կորուստէն ետք, մեր անկախ պետականութեան հիմնադրման 90ամեակն էր որ մենք տօնակատարեցինք 2008ին, ինչպէս նաեւ՝ Համազգայինի հիմնադրութեան 80ամեակը:

Իսկ այսօր, հաւաքուած ենք տօնակատարելու միութեան մը ծնունդը, որ անցնող 90 տարիներուն շարունակ աճեցաւ, յառաջացաւ ու տարածուեցաւ աշխարհի տարածքին: Միութիւն մը, որ նպատակադրեց պատրաստել ֆիզիքայէս առողջ ու տոկուն քաղաքացիներ, իմացական ու հոգեկան բարձր արժանիքներով տոգորուած հայ մարդը, սորվեցնելով անոր՝

● Ըլլալ չարքաշ ու արի, ազգասէր ու հայրենասէր, օրինապահ ու կարգապահ:

● Յառաջացնելով անոր մէջ պարտականութեան, պատասխանատուութեան ու պատուոյ զգացումները, ու նաեւ՝ զարգացնելով իր մէջ համերաշխութեան եւ իրերօգնութեան ոգին:

● Լեցնել անոր միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով:

Հ.Մ.Ը.Մ.ը այս վսեմ նպատակը կ'իրագործէ սկստական կեանքով, մարզական գործունէութեամբ, ընկերային-ակմբային հաւաքոյթներով եւ ընդհանուր մարմնամարզի դաստիարակութեամբ, տալով յաճախակի դասախօսութիւններ, սեմինարներ, ժողովներ եւ այլն:

Երբ նայելու ըլլանք Հ.Մ.Ը.Մ.ի այս նպատակներուն, պիտի անդրադառնանք, որ 90 տարիներ առաջ Պոլսոյ կեանքին համար առաջադրուած այս նպատակները որքան պատշաճ են նաեւ Աւստրալիոյ այսօրուան մեր կեանքին:

Եթէ կ'ուզենք Հ.Մ.Ը.Մ.ը իրապէս ճանչնալ, հարկ է նայինք անոր պատմութեան:

Արդ, առնենք Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Շաւարշ Քրիսեանը, մարզական դաստիարակ մըն էր եւ միաժամանակ «Մարմնամարզ» թերթի խմբագիրը: անոր երազն էր տեսնել հայութեան բոլոր մարզական խմբաւորումները համախմբուած մէկ կազմակերպութեան ներքեւ: Կ'երազէր նաեւ կազմակերպել հայկական ողիմպիական խաղեր, ինչ որ իրականացաւ 1911ին: Այնուհետեւ, այդ խաղերը շարունակեցին տեղի ունենալ ամէն տարի, մինչեւ 1914, երբ ընդհատուեցան համաշխարհային պատերազմով:

1912ին, Շաւարշ Քրիսեան Եգիպտոսի Աղեքսանդրիա քա-



ղաքին մէջ կը հիմնէր «Կամք Մարզական Ակումբ»ը, ապա 1914ին «Արարատ Մարզական Ակումբ»ը, Գահիրէի մէջ՝ Սակայն աւա՛ղ որ կարճ եղաւ այս վեհանձն մարզիկին կեանքը: 1915ի Ապրիլ 24ին, հարիւրաւոր բախտակից հայ մտաւորականութեան եւ ղեկավարութեան հետ, ինք եւս կը ձերբակալուէր եւ կ'ենթարկուէր Օսմանեան կառավարութեան գործադրած անմարդկային մեծ ոճիրին:

Շաւարշ Քրիսեանի մեծ երազը՝ բոլոր հայ մարզական խմբաւորումները մէկ կազմակերպութեան մէջ միաւորելու, կ'իրականանար Գրիգոր Յակոբեանի, Տիգրան Խոյեանի, Լեւոն Յակոբեանի, Գարլօ Շահինեանի, Հայկ Ճիգմէճեանի, Վահրամ Փափազեանի եւ Ժիրայր Խորասանճեանի ջանքերով, երբ 1918ի Նոյեմբեր 16ին Պոլսոյ մէջ հիմը կը դրուէր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, կրճատուած՝ Հ.Մ.Ը.Մ.ին: Չորս մասնաճիւղեր կը կազմուէին Պոլսոյ մէջ:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը 1920 Յունիս 20ին պաշտօնապէս Հայաստան կը հրաւիրէր Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները՝ օգտուելու համար մարզական եւ սկստական շարժումի մէջ անոնց ունեցած փորձառութեանն: Թէեւ շուտով մարզական եւ սկստական շարժումը տարածում կը գտնէ Հայաստանի մէջ, սակայն դժբախտաբար, շատ չանցած, Հայաստանի խորհրդայնացումով կ'արգիլուի Հ.Մ.Ը.Մ.ի, գործունէութիւնը: 1922ին այս անգամ Պոլսոյ մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերուն կը պարտադրուի փակել իրենց դռները եւ վերջ տալ գործունէութեան: Ի հետեւանք ասոր, ղեկավարութիւնը կը ցրուի աշխարհի չորս կողմ: Հազիւ երկու տարի անցած, Հ.Մ.Ը.Մ.ը կը վերսկսի իր կազ-

մակերպական աշխատանքներուն՝ մասնաճիւղեր հիմնելով, 1924ին՝ Պէյրուէթի եւ 1925ին՝ Հայէպի մէջ: Այս երկու հաստատութիւններուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ը շատ արագ կը սկսի զարգանալ, յառաջանալ եւ արդէն շատ չանցած Հ.Մ.Ը.Մ.ը տարածուած է արդէն հայկական գրեթէ բոլոր գաղթօճախներ:

Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ը ունի 100 մասնաճիւղ՝ ցրուած աշխարհի չորս ծագերուն, ինչ որ ցոյց կու տայ իր իսկական միջազգային կազմակերպութիւն մը ըլլալը:

1978ը յատկանշուեցաւ որպէս նոր ժամանակաշրջան մը: Առաջին անգամ ըլլալով կազմակերպուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկստական բանակումը՝ Աթէնքի մէջ, որուն յաջորդեցին 1981ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին մարզախաղերը Գանատայի Թորոնթօ քաղաքին մէջ:

Այս առիթներուն աշխարհի տարածքին շատ մը երկիրներէ Հ.Մ.Ը.Մ.ի սկստական եւ մարզական խումբեր իրենց մասնակցութիւնը բերին: Անշուշտ, Աւստրալիան եւս իր մասնակցութիւնը բերաւ այս հանդիպումներուն:

Նման առիթներ մասնակիցներուն մէջ ամբացուցին հայ ազգի պատկանելիութեան գիտակցութիւնը եւ միաժամանակ իրենց ապրած երկիրները ներկայացնելու հպարտ քաղաքացիի զգացումը, լաւ ըմբռնելով իսկական համաշխարհային կազմակերպութեան մը իրենց պատկանիլը:

Այսօր կը յիշատակենք նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ 43 տարիներու մարզական եւ սկստական բեղուն գործունէութիւնը: Գիշտ քաղաքի պիտի դիտենք Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ անցնող 43 տարիներու պատմութիւնը, իր սկստական բանակավայրերէն, Նաւասարդեան խաղերէն, Ապրիլ 24երու եւ Մայիս 28երու առիթներով տողանցքներէն նկարներ եւ տեսերիւներ:

Ուրեմն ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.ը եւ ի՞նչ հարցեր կը դիմագրաւէ ներկայիս: Նկատելի է, որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզական եւ սկստական նպատակներուն իրագործումը պատշաճ եւ համահունչ են Աւստրալիոյ մշակոյթին եւս. հետեւաբար իբրեւ արդիւնք՝ Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ այդպիսին գործող միութիւն, այս երկրին մէջ բնական քաջողողական ունի աւստրալահայ գաղութին: Մենք իսկապէս բախտաւոր ենք որ կ'ապրինք այնպիսի երկրի մը մէջ, որ կ'արժեւորէ իր ազատութիւնը:

Իբրեւ անհատ, մենք ազատ ենք արտայայտելու մենք մեզ, ազատ ենք ընելու այն բոլորը ինչ որ կ'ուզենք՝ օրէնքի սահմաններու մէջ անշուշտ: Կը գերազանցենք այն բոլոր բաներուն մէջ, գոր կ'ուզենք: Սակայն այս ազատութեան հետ մենք կը դիմագրաւենք ճիշդ ընտրութիւն կատարելու դժուարութիւնը: Այս **փարատաք**ը, գոր ազատութիւնը կը ներկայացնէ, գիտնալով թէ ո՞րն է ճիշդը եւ ո՞րն է սխալը, կը գատորոշէ մեզ իբրեւ անհատ, իբրեւ կազմակերպութիւն եւ իբրեւ համայնք: Օգնութեան համար, միակ բանը որուն կընանք ապաւինիլ, մեր քրիստոնէական եւ հայկական արժէքներն են: Սակայն հարկ է որ կամքն ու կարգապահութիւնը ունենանք այդ արժէքներով ապրելու եւ արտայայտուելու, երբ ուրիշներ կը շեղին եւ սխալ ընտրութիւններ կ'ընեն:

Մինչ մեր գաղութը կը մեծնայ եւ կը բարգաւաճի, փոստալուր հակումներ կը դրսեւորուին:

Սկսած ենք մարդիկը արժեւորել իրենց ունեցած տոյարներ:

րուն չափով եւ չենք տեսներ թէ անոնք ի՞նչ կ'ընեն եւ կամ կեանքի ի՞նչ յաջողութիւններ ձեռք կը բերեն:

Կ'ըսեն, մեր հայկական ինքնութիւնը պահելը այլեւս կարելորդ չէ, մեր զաւակներուն հետ անգլերէն խօսիլը ընդունելի է եւ այլն:

Յաճախ հարց տուած են ինծի. ինչո՞ւ կարելորդ է հայկական ժառանգութեան պահպանումը, աւելի դիւրին չէ՞ անգլերէն խօսիլը, վերջին հաշուով ես ինքզինքս հայ կը զգամ եւ կարելորդ այդ է: Հայկական երաժշտութիւն ունկնդրելը, հայկական տոհմիկ պարը պարելը, հայերէն գրութիւն մը կամ ոտանաւոր մը կարդալը, այդքան ալ կարելորդ չեն Աւստրալիա ապրող պոստիկին համար, ինծի ի՞նչ օգուտ պիտի ունենան անոնք: Այս հարցումներուն կրնանք պատասխանել միայն այս ձեւով:

Ենթադրենք, կէս գիշերին մէջ ծուխ ու կրակի մէջ, քունէդ արթննա եւ միայն մէկ-երկու բան վերցնելու հազիւ ժամանակ ունիս, ինչ բաներ պիտի ըլլան այդ վերցուցածներդ:

Այս հարցումը տրուած է մարդոց եւ տասնէն ութը ըսած են ընտանեկան նկարները եւ ալպոմները: Ինչո՞ւ: Որովհետեւ ամէն ինչ կրնան փոխարինել, բայց չեն կրնար իրենց յիշատակները փոխարինել. ինչը կարելորդ է իրենց համար: Անոնք է որ կը ճշդեն թէ ո՞վ են իրենք: Մեր մշակոյթն ալ նկարներու ալպոմի մը կը նմանի, որ կը բացատրէ մեր 3000 տարուան մշակոյթը՝ ո՞վ ենք մենք, իբրեւ ազգ ինչերէ՞ անցած ենք եւ այլն: Գիտակցումը մեր ուրիշ՝ եկած ըլլալուն, ամէն պարագայի, պիտի օգնէ մեզ մեր ապագային:

Հիմա դուն պէտք է հարցնես ինքզինքիդ, թէ արդեօք դուն այդ անձն ես որ նկարներուդ ալպոմը հետդ պիտի առնես, երբ տունդ հրդեհի մէջ է, թէ այն անձն ես, որ դրամապանակը կամ գոհարեղէնները պիտի փնտռէ:

Ահաւասիկ հոս է որ Հ.Մ.Ը.Մ.ը կը տարբերի մարզական կամ սկստական այլ միութենէ: Հ.Մ.Ը.Մ.ին համար կարելորդ արժէք կը ներկայացնէ հայրութեան ժառանգը, անոր առաքինութիւնները՝ պարտականութեանց զգացում, պատասխանատուութեան գիտակցութիւնը եւ յարգումը, համերաշխութեան եւ համագործակցութեան ոգիով գործելը:

Աւստրալիոյ մէջ մենք բախտաւոր ենք, որ 43 տարի առաջ Հ.Մ.Ը.Մ.ական խումբ մը եղբայրներ հեռատեսութիւնը ունեցան հիմը դնելու այս միութեան: Կ'ուզենք մեր խոր երախտագիտութիւնը յայտնել անոնց ու նաեւ մեր շնորհակալութիւնը յայտնել այն բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք իրենց անհամար ժամերը տրամադրեցին՝ կազմակերպելով բանակումներ, Նաւասարդեան մարզախաղեր, ձեռնարկներ եւ այլն, ըլլան անոնք մասնաճիւղերու կամ Երջանային Վարչութիւններու անդամներ, թէ յանձնախումբերու մէջ աշխատողներ, սկստական առաջնորդներ, խմբապետներ, խորհուրդի անդամներ եւ անհամար կամաւորներ, որոնք պատասխանատու դիրքերով եւ կամ վարագոյրի ետին լռելեայն աշխատելով յաջողուցին այս բոլոր գործերը:

Անոնք «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի օրինակելի ոգին ցոյց տուին մեզի:

Շնորհակալութիւն:

ՊԱՏՈՒԱԲԵՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ՔՈՒՆՅԹԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ
25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆԻՆ ԱՌԻԹՈՎ)

Վ. Ասագեան ՊԵՅՐՈՒԹ

Չ ափազանցութիւններ շատ կան մեր կեանքին մէջ: «Հայուն չափը չափազանցութիւնն է», ըսած է Անդրանիկ Մառուկեան: Այս պարագային սակայն, «պատուաբեր իրագործումը» երբեք չափազանցութիւն չէ, այլ՝ արժանի գնահատանք այն մեծարժէք գործին, որուն արդիւնքը կը կոչուի «Մառայութեան անսպառ աղբիւր՝ Հ.Մ.Ը.Մ.», հրատարակուած՝ Քուէյթ, 2009ին:

«Մառայութեան անսպառ աղբիւր՝ Հ.Մ.Ը.Մ.»ը 248 էջոց պատկառելի յուշամատենան-ալպոմ մըն է, նուիրուած՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ամեակին եւ


Ք ու է յ թ ի
մասնաճիւղի
25ամեակին:
Իր տեսակին
մէջ ան հա-
րուստ հրա-
տարակո-
թիւնն մըն է
Հ.Մ.Ը.Մ.Ի
առաքելու-
թիւնը ծանօ-
թացող եւ
չըջանի մը
պատմու-
թիւնը փո-
խանցող: Գու-
նագեղ, հոյա-
կապ յուշա-
մատենան մը,
որուն մասնա-
գիտական,
բարձրորակ
պատրաստու-
թեան պատիւը կ'երթայ

11 հոգինոց աշխատակազմի մը Քուէյթէն եւ Լիբանանէն: Գործին ընդհանուր պատասխանատունն է Յարութ Պէտիրեան, գլխաւոր խմբագիրը՝ Մարալ Համպոյեան, խմբագրական կազմի անդամներ՝

Ժան Պէպէճեան, Կարօ Յ. Արսլանեան եւ Յովհաննէս Սերրեան: Խմբագրութեան կ'աջակցին Յակոբ Պէրպէրեան, Ռուզաննա Նազարեան, Նորա Բարսեղեան եւ Զարեհ Զօրէքճեան (վերջին երկուքը Լիբանանէն): Յուշամատենանի 390 նկարներուն հաւաքագրումը կատարած է Յակոբ Մեյլքսէթեան, իսկ ընդհանուր ձեւաւորումը՝ Սարգիս Սարգիսեան:

Մեծ իրագործումները անպայման կ'ունենան մեծ մեկեանսներ: Մարդիկ, որոնք զաղափարի ու հաւատքի խոր համոզումներէ մղուած՝ իրենց քսակները լայն կը բանան ազգանպաստ գործ մը յաջողցնելու համար: Ազգը երախտագիտութեամբ կը յիշէ նմանները. անոնց կարգին՝ տէր եւ տիկին Սամուէլ եւ Մարյէն Պոյաճեանները, որոնք այս մեծածախս գործին մեկեանսներն են:

«Մառայութեան անսպառ աղբիւր՝ Հ.Մ.Ը.Մ.»ը կը բացուի երախտագիտութեան խօսքով եւ նախաբանով, ուր հրատարակիչները Հ.Մ.Ը.Մ.Ի Քուէյթի մասնաճիւղին



անունով
շնորհակա-
լութիւնն
կը յայտնեն
յուշամատ-
ենանին իրա-
գործման
իրենց մաս-
նակցութիւնը
բերած բոլոր
ազգայիննե-
րուն: Նախա-
բանը նաեւ կը
ճշդէ, որ «Հ-
Մ.Ը.Մ.Ի
Քուէյթի մե-
կուսի վարչու-
թեան փա-
փաքն էր գիրքին

առաջին բաժինը յատկաց-
նել Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան

90ամեայ պատմութեան, ինչպէս նաեւ յատկացնել բոլորին, որ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 90րդ տարեդարձը հայ իրականութեան մէջ կը նշանակէ աշխատանք, պատասխանատուութիւն, նուիրում...»:

Նախաբանէն ետք, գրասէրին դիմաց կը բացուի «ցեղի ան-

մահաներ» ուն 90 տարուան մաքառումներով ապրուած կեանքը, որուն նշանաբանը եղած է «Բարձրացիր-բարձրացուր», իսկ նպատակը՝ «Հայացիր-հայացուր», Մ. Իշխանի բառերով: «Ողջոյնի եւ օրհնութեան խօսքեր», «Պատմական ակնարկ», «Հ.Մ.Լ.Մ.ի մասին», «Հ.Մ.Լ.Մ.ականի առանձնայատկութիւնները» եւ «Հ.Մ.Լ.Մ. ներկայ մարտահրաւէրներուն դէմ յանդիման» կը ներկայացնեն գիրքին առաջին հինգ բաժինները, որոնք մէկ կողմէ կը ներկայացնեն միութեան 90 տարիներու գլխաւոր դէպքերն ու դէմքերը, իսկ միւս կողմէ լուսարձակի տակ կ'առնեն այն արժէքները, որոնք Հ.Մ.Լ.Մ.ը Հ.Մ.Լ.Մ. կը պահեն, ընկերային-բարոյական վեհ սկզբունքներով եւ ազգային-գաղափարական պայծառ դիմագիծով: Իբրեւ գրականութիւն, հոս մեծ մասամբ օգտագործուած են միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին խմբագրականներն ու պատմական ակնարկները: Կատարուած է սերտուած հասկաքաղ մը Հ.Մ.Լ.Մ.ի մասին խօսուած ու գրուած նիւթերու՝ «Իւրայատուկ միութիւն» (Երջանկայիշատակ Գարեգին Բ. Կաթողիկոս), «Հ.Մ.Լ.Մ.ը «փոքրիկ Հայաստան» մը Սփիւռքի մէջ...» (Արամ Ա. Կաթողիկոս), «Գիտակցութիւն, ոգի, նպատակ» (Մ. Արզումանեան), «Անխոնջ ջահակիրը» (Վարդգէս Տէր Կարապետեան), «Հ.Մ.Լ.Մ.ի հաւատոյ հանգանակը» (Յովհաննէս Տէր Յարութիւնեան), «Հայացիր-հայացուր» (Մ. Իշխան) եւ տակաւին՝ «Հ.Մ.Լ.Մ.ականը», «Նախ նկարագիր», «Երզումը», «Հաւատարմութիւնը», «Յարգանքը», «Ձոհողութիւն», «Պարտականութեան գիտակցութիւն», «Անդուլ աշխատանք», «Մնայուն սկզբունքներ», «Համահայկական կամաւոր բանակը՝ Հ.Մ.Լ.Մ.», «Միւս դպրոցը» («Մարզիկ»ի խմբագրականներ):

Այնուհետեւ, յուշամատեն-ալպոմին յաջորդական վեց բաժինները նուիրուած են յորեյեար մասնաճիւղին 25ամեակին. «Կազմաւորում», «Հ.Մ.Լ.Մ.ի ծնունդ», «Վերակազմաւորում», «Կայունացում», «Քուէյթի Հ.Մ.Լ.Մ.ի պատուաբեր ծառաներ» եւ «Յիշատակելի նշոյններ»: Կատարուած է խղճամիտ աշխատանք՝ միութեան 32րդ մասնաճիւղին պատմութիւնը առարկայական ու ամբողջական ձեւով ներկայացնելու համար: Պատուը ունի տեղեկագրական բնոյթ: Յայտնաբար, զայն պատրաստողները իրենց տրամադրութեան տակ ունեցած են մեծաթիւ տեղեկագիրներ, թէեւ այլուր անոնք ներողամտութիւն կը հայցեն այն վրիպումներուն համար, որոնք կարելի է վերադրել «Հ.Մ.Լ.Մ.ի կանոնաւոր եւ կազմակերպուած արխիւներու չգոյութեան»: Նկարները հոս կատարած են լրացուցիչ դեր: «Յիշատակելի նշոյններ» բաժինը առանձինն, 174 նկարներով, յուշերու եւ յիշատակներու զեղեցիկ վերակենդանացում մըն է: Հոն կը տեսնուին դէմքեր, որոնք պատմութիւն կերտած ու պատմութիւն դարձած են



այլեւս: Չկան, բաժնուած են յաւէտ: Ուրիշներ, դեռատի եւ երիտասարդ, հիմա արդէն ճերմրկած մազերով վաստակաւորներ են: Անոնց զաւակներուն նկարները կ'երեւին քանի մը էջ անդին, ժիր ու կայտառ, տարիներ ետք իրենց ծնողներուն ճակատագրին մատնուելու բնական կարգով:

Մասնաճիւղին պատմութեան այս ներկայացումը, անշուշտ, ունեցած է յատուկ առաջադրանք, զոր յուշամատեն-ալպոմին խմբագիրները ներկայացուցած են իրենց գործին աւարտին. «Հ.Մ.Լ.Մ.ի Քուէյթի մեկուսի մասնաճիւղի անցնող 25 տարիներու գործունէութեան համառօտ այս ակնարկը, որ տեղեկագրական բնոյթ կը կրէ, կը ծառայէ այն նպատակին, որ Հ.Մ.Լ.Մ.ի թանկարժէք մեծ միութեան ծննդեան 90ամեակի յղթական տօնակատարութեանց աւրնթեր նաեւ յիշուի շրջանիս համեստ նուաճումները Հ.Մ.Լ.Մ.ական մաքուր շունչով՝ նոր սերունդները դաստիարակելու գործին մէջ»:

Կարելի է վստահեցնել, թէ առաջադրանքը իր նպատակին ծառայած է լիովին:

Փաստը. նորերու գնահատանքն է հիներու նուաճումներուն, ինչ որ պերճախօս կերպով կը ցոյլայ 25ամեակի տօնակատարութիւնները ներկայացնող յուշամատեն-ալպոմին վերջին բաժնով: «Արծաթեայ աւարտ» խորագիրը լաւագոյնս կը բնորոշէ մասնաճիւղին բեղուն վաստակը, միաժամանակ, սակայն, զայն կը դնէ յաւելեալ գործով «արծաթ»ը «ոսկի»ի վերածելու յանձնառութեան տակ: «Արծաթ»ը կը վերաբերի նաեւ միութեան 90ամեակի եւ մասնաճիւղի 25ամեակի փառահեղ տօնակատարութիւններուն, որոնք իրականացան սկստական յատուկ հանդիսութեամբ եւ մեծաշուք ճաշկերոյթով: Չոյզ տօնակատարութիւններուն խօսքերը, թղթակցութիւններն ու նկարները հարազատօրէն կը ներկայացնեն այն միջնորոտը, կեանքն ու կամքը, զոր այսօր ունի մասնաճիւղը, իբրեւ երաշխիք վաղուան իր իրագործումներուն:

«Հ.Մ.Լ.Մ. ծառայութեան անսպառ աղբիւր» յուշամատեն-ալպոմը նիւթերու իր ճոխութեան հետ միասին ունի մատուցման ձեւի արդիականութիւն: «Նշուրն ծանուցումի ընկերութիւն»ը եւ «Ահրամ փրէս» հրատարակչատուներ օգտագործած են ձեւաւորման եւ հրատարակչական նորագոյն միջոցները, որպէսզի մեծ յորեյեաններուն վայել մեծ գործ մը հրամցնեն Հ.Մ.Լ.Մ.ին: Ու յաջողա՛ծ են անոնք:

«Հ.Մ.Լ.Մ. ծառայութեան անսպառ աղբիւր»ը, այսպէսով, կը ներկայանայ իբրեւ շքեղ հրատարակութիւն, պատուաբեր իրագործում, որմով հպարտանալու ամէն պատճառ ունի Քուէյթի մասնաճիւղը եւ Քուէյթի մասնաճիւղով՝ Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքը:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱԲՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



**Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, Ժ. ՄԱՍ**

ՀՄԼՄ-ի Հայկապի մասնաճիւղին գոյութիւնը եւ տարած աշխատանքները որպէսզի ազգային ու իրաւական բնոյթ ստանային, ինչպէս Պէյրութի մասնաճիւղը, այնպէս ալ Հայկապէսը էր իր ծրագրով վաւերացուէր Ազգային Առաջնորդարանի կողմէ: Ասոր համար ալ, 1925 Դեկտեմբեր թուագրով դիմում կը կատարուի Բերիոյ Թեմի Առաջնորդ Արտաւազգ Մ. Վրդ. Սիւրմէեանին: Նամակը հաղորդելով կազմութիւնը ՀՄԼՄ-ին, կը ներփակէ Պէյրութէն ստացուած ծրագիր-կանոնադրը ու կ'աւելցնէ. «Այս երկտողով կը խնդրենք Ձեր ազնուութենէն, որ բարեհաճէիք վաւերացրնել գայն. կը յուսանք որ Ձեր բարձր հովանաւորութիւնը եւ բարոյական աջակցութիւնը պիտի վայելենք միշտ մեր գոր-

ծունէութեան ընթացքին»:

Վարչութեան խնդրանքը Այնթապի Կրթասիրաց Միութեան մօտ դրական արդիւնքի չի յանգիր, անոր համար ալ Առաջնորդարանին կողմէ միութեան վաւերացումին առիթէն օգտուելով, վարչութիւնը իր շնորհակալութեան խօսքին կ'աւելցնէ. «... Կու գանք խնդրելու, որ մեզի տրամադրուէր ազգային հաստատութիւններէն որեւէ տեղ մը, որպէսզի մենք կարողանայինք միութեանս ժողովները, դասախօսութիւնները հոն սարքել, նոյն ատեն հոն հաստատելով մարմնակրթութեան յատուկ շուէտական մարզանքի համար գործիքները»:

Հոս, ինչպէս կը տեսնուի, նորակազմ միութիւնը արդէն կը մտնէ իր կոչումին հարազատ հունին մէջ, կիրարկելով իր անդամներուն շարքերէն ներս գորշիական-շուէտական դրութեամբ մարմնակրթանք: Ֆութպոլ, հեծելանիւի, մարմնամարզի, ասոնց հետ նաեւ պարբերաբար խումբերուն կազմութիւնը 16 Դեկտեմբեր 1925ին կը լրացնէր մարզական միութեան մը առաջադրանքին գլխաւոր մասը: Ասոնցմէ զատ կային նաեւ իմացական զարգացման հետ, միութենէն ներս ստեղծել մտերմիկ մթնոլորտ անդամները իրարու հետ շփման մէջ դնելով: Այս կենսական պահանջներուն գոհացում տարու համար, կատարուած դիմումները Այնթապի Կրթասիրացին եւ Առաջնորդարանին ապարդիւն կ'անցնին: Հաւաքավայր մը ունենալու հետապնդումին մէջ, վարչութիւնը անգիւղոյ, 20 Դեկտեմբեր 1925ին, կրկին կը դիմէ Առաջնորդարան. «... Կազանդի առթիւ վարչութիւնս որոշած էր ընկերական պարզ երեկոյթ մը սարքել, նպատակ ունենալով միութեան անդամները իրարու քով բերելու եւ զիրար ծանօթացնելու:

«Այս երկտողով կու գանք Ձեր գերապատուութենէն խնդրելու, որ յառաջիկայ Ծաբաթ երեկոյ, 2 Յունուար 1926ին, կ. ե. մեր տրամադրութեան տակ զնէք եկեղեցիին բակին մէջ գտնուող մանկապարտէզի սրահը»:

Այս հաւաքոյթը տեղի կ'ունենայ:

Հայկապի առժամեայ վարչութիւնը, իր երկու ամսուան գործունէութենէն ետք, երբ արդէն հիմնաւորուած կը զգայ միութեան արմատները, կ'որոշէ ընդհանուր անդամական ժողով գումարել եւ ընտրել շրջանին օրինաւոր մարմինը:

Այդ ժողովը տեղի կ'ունենայ եւ նորընտիր վարչութիւնը գործի կը մղուի նոյն թափով: Այս վարչութեան մաս կը կազմեն Լուսեր Մասպանաճեան, Տիգրան Աղճայեան, Մահակ Խաչատուրեան, Ծաւարչ Պէքէրեան, Լեւոն Պապիկեան, Լեւոն Արզարեան, Միհրան Կարապետեան եւ Լեւոն Մուրատեան:

Նորընտիր վարչութեան առաջին գործը կ'ըլլայ միութեան պետական վաւերացումի խիստ կարեւոր խնդիրը, միութեան բացը գոցելու համար պատուոյ անդամազրուութեան հարցը,

Հայկալի մէջ գոյութիւն ունեցող Ֆուլթայոյի խումբերուն խմբապետները ժողովի հրաւիրելու, լիկ-մաչի մրցումներուն ծրագիրը մշակելու պարագան:

Հրաւիրուած խումբերն են. «Տալոբիկ» (Բարգէն Վահրատեան), «Կայծակ» (Գառնիկ Վարժապետեան), «Մասիս» (Սարգիս Պարտազճեան), «Տորք» (Յակոբ Քէշիշեան), Ժիպէյ (Մկրտիչ Մելքիսեան):

Օրերու հետ արմատ նետող Հ.Մ.Լ.Մ.ին համար, Պէյրուսթը որպէս նախակարապետը այս միութեան կազմութեան, մանաւանդ Պէյրուսթը որպէս քաղաքական ու ընկերային կեանքի կեդրոն, ինքնաբերաբար իր ուսերուն վրայ պիտի առնէր շրջաններուն պահանջները դիւրացնելու աշխատանքը, թէեւ դեռ սկզբնական օրերուն իսկ Դամասկոսէն ու Հայկալէն առաջարկ կը ներկայացուի շրջանը օժտելու կեդրոնական մարմինով մը, անոր տալով յայն իրաւասութիւններ՝ շրջանները կազմակերպելու եւ աշխատանքները ներդաշնակելու համար: Առաջարկը կանխահաս էր: Ժամանակը պիտի հասունցնէր ու գոյութեան կոչէր այդ մարմինը:

Պէյրուսթի մասնաճիւղը 1926ի սեմին, բացօդեայ գործունէութեան կարելիութենէն զրկուած, կը ծրագրէ Բարեկենդանին, 6 Փետրուար 1926ին, մարզական երեկոյթ մը տալ թատրոն Գիւրսայի մէջ: Այս երեկոյթին փայլուն ելքին համար, վարչութիւնը 1926 Յունուար 16ին նամակ մը կը գրէ Անթիլիասի որբանոցի տնօրէնութեան ու կը բացատրէ. «Այս ձեռնարկին նպատակն է նախ հայոց մէջ մարզական ոգին ժողովրդականացնել, ապա բաւականին նիւթական ապահովել կարենալ գնելու մարզական կարիքներ:

«Մենք ապահոված ենք Հայ Կաթողիկէ ու Հայ Բարեգործական որբանոցներու օժանդակութիւնը բուրգերու եւ չափական մարզանքներու իրենց մասնակցութեամբ:

«Պիտի խնդրէինք որ Ձեր որբերը կատարէին հետեւեալները:-

- «1. Ընդհանուր հսկողութիւն տասներկու սկաուտներով:
- «2. Քանի մը բուրգ եւ կենդանի պատկեր մը:
- «3. Նուագախումբ, որ հանդէսի տեւողութեան մէջ ընդ մէջ նուագէ, ինչպէս նաեւ՝ երկու ժամ տեւելիք պարերու ատեն»:

Այս երեկոյթը իր յայտագրով, - բուրգ, շուէտական ու չափական մարզանք, կենդանի պատկեր, կուփամարտ, - եթէ մէկ կողմէ կը պատկերացնէ մարզական կեանքի գանազան փուլերը, միւս կողմէ կը ցուցադրէ հայկական ոգիին միասնականութիւնը, երբ նկատի առնենք Հայ Կաթողիկէ, Հայ Բարեգործական եւ Անթիլիասի որբանոցներուն մասնակցութիւնը: Յայտագրին մաս կազմող գոյգ բանախօսութիւնները



1929. Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջ. վարչութեն եւ Հայկալի վարչութեան անդամներ:

հրապարակային քարոզչութեան առաջին հունտերն էին որ կը նետուէին ժողովուրդին սրտերուն ու հոգիներուն մէջ, բացատրելով այս միութեան սրբազան առաքելութիւնը:

Այս ձեռնարկէն ետք տեղի կ'ունենայ անդամական ընդհանուր ժողով, ուր կ'ընտրուի նոր վարչութիւն:

Ֆուլթայոյի մրցումները ըստ կարելիութեան կը շարունակուին հայ եւ օտար խումբերու հետ (Իւնիոն Սփորթիվ, գինուորական եւ այլն): Հ.Մ.Լ.Մ.ը խաղաղաշտ կ'իջեցնէ նաեւ իր Բ. խումբը, որ խոստումայից տղաներէ կազմուած, ինքզինք կը պարտադրէ իրեն հաւասար խումբերուն դէմ:

Այս աշխատանքներուն զուգընթաց, միութիւնը իր գոյութիւնը ամուր հիմերու վրայ բարձրացնելու մտօք, իր ծրագիր-կանոնագիրը Ազգային իշխանութեան կողմէ վաւերացրենից ետք, կը դիմէ պետական իշխանութեան՝ նոյն նպատակին համար, իր 1926 Ապրիլ 3 թուակիր դիմումնագրով:

«Ն.Վ. Կառավարիչ Մեծն Լիբանանի Վսեմափայլ,

«Պարտք կը գգամ Ձեզ տեղեկացնելու, որ մեր Հ.Մ.Լ.Մ. ընկերակցութիւնը, - Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, - հիմնուած 1918ին, Կ. Պոլիս, այժմ Եւրոպայի եւ Սուրիոյ հայկական բոլոր գաղութներուն մէջ ունի բազմաթիւ մասնաճիւղեր: Վերջերս մասնաճիւղ մը կազմուած է նաեւ Պէյրուսթի մէջ:

«Ներփակ կը ներկայացնենք վերոյիշեալ ընկերակցութեան ծրագիր-կանոնագիրը, խնդրելով որ բարեհաճիք իր կազմութիւնը օրինականացնելը»:

Այս դիմումագիրը ստորագրուած է տղթ. Ա. Գարագաշեանի կողմէ, իբրեւ քարտուղար, Յակոբ Հայրապետեան նախագահ եւ Ժիրայր Պալեան: Վաւերացումը կը ստացուի թիւ 1703 հաստատագրով:

(Շար. 10)

Գեորգ Թորոյեան
ՊԵՅՐՈՒԹ

14 Դեկտեմբեր 2007ին Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբի մարզիչի պաշտօնը կը ստանձնէր իտալացի անուանի մարզիչ Ֆապիօ Քափելլոն: Ան միակ թեկնածունն էր: Սակայն, Անգլիոյ ֆետերասիոնը Սթիվըն Մըքլարէնի ձախողութենէն ետք կանգ կ'առնէր 61 տարեկան Քափելլոյի թեկնածութեան վրայ:

Ինչո՞ւ այս որոշումը: Երկար ճամբայ կտրած եւ փորձառու մարզիչ մը ըլլալու կողքին, պէտք է արձանագրել, որ իտալացին յաջողած է ամէնուրեք: Եթէ նայինք անոր մարզիչի ասպարէզին, պիտի նկատենք անոր յաջողութեան բազմաթիւ փաստերը:

Իբրեւ ֆուտպոլիստ, միջնապահ Քափելլո փայլուն խաղացող մը չէ եղած: 1967-1969 ան մաս կազմած է Ա. Էս. Ռոմայի եւ 62 մրցումի ընթացքին նշանակած է 11 կոլ: 1969ին ան կը միանայ Եոլվենթուսի եւ 165 մրցումի ընթացքին կը նշանակէ 27 կոլ: Ապա, 1976-1979 մաս կազմելով Ա. Սէ. Միլանին, անոր հետ կը կատարէ 65 մրցում եւ կը նշանակէ 4 կոլ: 1972-1976 Քափելլո Իտալիոյ ազգային խումբին շապիկը կը կրէ 32 անգամ, Սքոտլենթի հետ նշանակելով 8 կոլ: Անոր ամէնէն յիշատակելի մրցումը կը մնայ Անգլիոյ հաւաքակազմին դէմ մրցումը, երբ իտալացիք առաջին անգամ ըլլալով 14 Նոյեմբեր 1973ին յաղթանակ կ'արձանագրեն Ուէմպլիի մէջ, Անգլիոյ հաւաքակազմին դէմ: Այդ մրցումի կոլին հեղինակը Ֆապիօ Քափելլոն էր:

1980-1987 Քափելլո ֆուտպոլի մեկնաբան է պատկերասփիւռի զանազան կայաններու մէջ, իսկ 1987ին կը սկսի մարզիչի անոր ասպարէզը, երբ կը նշանակուի Ա. Սէ. Միլանի մարզիչ՝ Արիկօ Սաքիի օգնական:

ՄԱՐԶԻՉԻ ԱՍՊԱՐԷԶ

1990ին, Քափելլո կը նշանակուի Միլանի մարզիչ՝ փոխարինելով Սաքին: Այդ օրերու «անպարտելի» նկատուող կազմին համար այս նորեկ մարզիչը ոչ միայն յաջողութիւն կ'արձանագրէ, այլեւ՝ նոյն տարին իսկ կը տիրանայ Իտալիոյ ախոյեանութեան եւ 19 Մայիս 1991էն մինչեւ 15 Մարտ 1993 (ախոյեանութեան 58 մրցում) իր կազմը կը մնայ անպարտելի, արձանագրելով մրցանիշ: 1994ին, Չէմփիրըզ Լիկի աւարտականին, իտալացիք պատմական յաղթանակ մը կ'արձանագրեն Պարսելոնայի դէմ (4-0): Այդ օրերուն Պարսայի մարզիչն էր Եոհան Քրույֆ: Քափելլո կը լուծէր 1973ի Եոլվենթուս-Այաքս



աւարտականին Քրույֆէն իր վրէժը:

1996ին Քափելլո կը նշանակուի Ռէյալ Մատրիտի մարզիչ եւ նոյն տարին կը տիրանայ Սպանիոյ ախոյեանութեան: Սակայն «ինչ որ բան այն չէ» Ռէյալի մէջ: Քափելլո կը վերադառնայ հայրենիք եւ դարձեալ կը ստանձնէ Միլանի մարզումը: Սակայն այս անգամ արդէն դրական արդիւնքները հեռու են խումբէն: Քափելլո կը հրաժարի եւ կը ստանձնէ Ա. Էս. Ռոմայի մարզիչի պաշտօնը եւ 2001ին Ռոմա իր պատմութեան մէջ երրորդ անգամ ըլլալով կը տիրանայ Իտալիոյ ախոյեանութեան: Այս շրջանին կը սկսին իր անձին շուրջ տարբեր գրպարտութիւններ. բան մը որ կը ստիպէ զինք հրաժարիլ Ռոմայէն եւ ստանձնել Իտալիոյ «նշանած»ին՝ Եոլվենթուսի մարզումը, 2004-2006: Երկու տարի, յաջորդաբար, Եոլվենթուս կը տիրանայ Իտալիոյ ախոյեանութեան: Սակայն, 2006ին, Իտալիոյ ախոյեանութեան գալթակողութիւնը պատճառ կը դառնայ որ ան հեռանայ Եոլվենթուսէն, առանց որեւէ առնչութիւն ունենալու գալթակողութեան հետ:

2006ին Քափելլո կը վերադառնայ Մատրիտ եւ կը յաջողի անոր նուիրել 30րդ տիտղոսը: Կը մերժէ սակայն երկարաձգել պայմանագրութիւնը եւ կը հեռանայ Մատրիտէն:

Ակումբներու հետ Քափելլո կատարած է 542 մրցում, արձանագրած է 305 յաղթանակ, 161 հաւասարութիւն եւ 76 պարտութիւն:

ԱՆԳԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԻՆ ՅԵՏ

Քափելլո Անգլիոյ ազգային խումբի մարզիչի պաշտօնը կը ստանձնէր բաւական դժուար պայմաններու մէջ: Անգլիա դուրս մնացած էր Եւրօ-2008ի մրցաշարքէն, իսկ կարգ մը խաղացողներ տարիքի բերմամբ արդէն պիտի սկսէին հեռանալ խումբէն: Այլ խօսքով, ընդհանուր յուսահատական մթնոլորտ մը կը տիրէր Անգլիոյ ազգային խումբի ասպագային նկատմամբ:

Քափեյլո առանց բարդոյթներու կը սկսի իր աշխատանքին եւ բարեկամական առաջին երկու մրցումները (Զուլիցերիոյ դէմ՝ 2-1 յաղթանակ եւ Ֆրանսայի դէմ՝ 0-1 պարտութիւն) անորոշ կը ձգեն 2010ի Մոնտիալի գտումի մրցումներուն խումբին ճակատագիրը:

6 Սեպտեմբեր 2008ին կը սկսին Անգլիոյ գտումի մրցումները: Առաջին մրցումը Անտորայի դէմ կ'աւարտի 2-0 արդիւնքով, որմէ ետք յաղթարշաւը կը շարունակուի Խրուսթիոյ, Ուքրանիոյ, Ղազախստանի եւ Պիելոուոսիոյ դէմ: Անգլիա իր կատարած առաջին հինգ մրցումները կ'աւարտէ յաղթանակով, նշանակելով 16 կող: Ան կը գրաւէ ճրգ խմբակին առաջին դիրքը եւ գրեթէ կ'ապահովէ 2010ի Մոնտիալին իր տոմարը: Միաժամանակ, ան Անգլիոյ հետ կ'իրագործէ մրցանիշ մը, գտումի յաջորդական հինգ մրցումներ յաղթանակով աւարտելով:

Ո՞ր է Քափեյլոյ յաջողութեան գաղտնիքը:

Քափեյլո կը նկատուի խստապահանջ մարզիչ մը: Աստղերու հոյ մը անոր մարզումներուն շնորհիւ հասած է տիտղոսներու: Իր համոզումներու մասին խօսելով Քափեյլո կ'ըսէ. «Արդիւնքները աւելի կարեւոր են՝ քան գեղեցիկ խաղարկու-



թիւնը», եւ կ'աւելցնէ. «Յարձակողական խաղի ժամանակները այլեւս անցեալին կը պատկանին»: Ան համոզուած է, որ կարելի չէ նոյն ոճով մրցիլ բոլորին դէմ: «Իւրաքանչիւր մրցում ունի իր պայմանները եւ մարտավարութիւնը: Բոլորը կը ձգտին յաղթանակի, սակայն քիչերը կը հասնին անոր: Ուստի, ճիգ եւ միջոց պէտք չէ խնայել յաղթելու համար: Վերջապէս, իւրաքանչիւր խումբի նպատակը կը մնայ յաղթելը»:

Քափեյլո ջերմ հաւատացող մըն է հաւաքական խաղի հասկացողութեան: Ան աստղերու ներկայութիւնը այդքան ալ անհրաժեշտ չի նկատեր խումբի մը յաջողութեան համար: «Պէտք չէ վստահիլ աստղերու, ֆութպոլը իրարօգնութեան մրցում է, կ'ըսէ ան:

Դասական երաժշտութեան եւ օփերայի սիրահար, Սպանիոյ մէջ Տոն Ֆապիօ, Քափեյլո անգլիացիներու յոյսի խաբիսին է: Սըր Ալֆ Ռամսի 1966ին անգլիացիներուն կը բերէր Մոնտիալի բաժակը: 44 տարի ետք Քափեյլո պիտի յաջողի՞ նոյնը ընել յառաջիկայ տարի, Հարաւային Ափրիկէի մէջ, 2010ի Մոնտիալին...

with the complements of

Restaurant Al-Mayass



«ՀԱՅ ՄԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՆՇՈՒՄ ՀՐԱԶԴԴԱՆԻ ՄԷՋ

Թղթակից ՀՐԱԶԴԱՆ

Ապրիլի 18ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ը մեծ հանդիսություն էր նշեց «Հայ Սկաուտի Օրը»: Միջոցառումը կազմակերպուել էր Հրազդան քաղաքի Երիտասարդական Կենտրոնում՝ կազմակերպության բոլոր միակորներին մասնակցություններով: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետ եղբ. Ռոմանոս Պետրոսեանի բացման խօսքից յետոյ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչության անունից մասնակիցներին շնորհաւորական ուղերձ յղեց վարչության փոխ ատենապետ եղբ. Օշին Փիրումեանը:

Բացման արարողության շրջանում 2008 թ. գործունէութեան շրջանում իրենց ակտիվութեամբ առաւել աչքի ընկած սկաուտներին (երեքը Երեւանից եւ մէկական՝ Աբովեան, Վահան Զերազ, Վահէ, Վ. Բախչեան,

Յակոբ Առուստամեան միակորներէց) զնահատագրերի եւ խրախուսական մրցանակների յանձնումը: Այնուհետեւ, եղբ. Վիգէն Յովհաննիսեանը մասնակիցներին ներկայացրեց իր կողմից պատրաստուած Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի համացանցի պաշտօնական կայք էջի նոր տարբերակը: Ներկաները դիտեցին նաեւ Հայաստանում սկաուտական շարժման վերահիմ-

նադրմանը նուիրուած ֆիլմը, որից յետոյ միջոցառումը շարունակուեց ժամանցային ծրագրի տեսքով: Կազմակերպիչները չէին մոռացել տօնական շքեղ կարկանդակի մասին: Խընճոյքի ամենաթեթ պահին հանդիսասրահ բերուեց Շուշանածաղիկով եւ Հ.Մ.Ը.Մ-ի վահանով զարդարուած հսկայ կարկանդակը:

Միջոցառումը լուսաբանուեց Հանրային եւ «Երկիր Մետիա» հեռուստաընկերությունների լրատուական ծառայությունների կողմից:

Հարկ է նշել, որ նոյն օրը առաւօտեան, մինչեւ միջոցառման սկիզբը, «Հայ Սկաուտի Օր»-ուան կապակցութեամբ «Երկիր Մետիա» հեռուստաընկերության առաւօտեան ծրագրի ուղիղ եթերի տաղաւարում հիւրընկալուեցին Երեւանի միակորի սկաուտներ եղբ. Արթուր Կարապետեանը եւ քոյր Այտա Թորոսեանը:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՍՆԱԾԻԲԴԻ ԱՌՕՐԵԱՅԷՆ



Թղթակից ԱԼՄԵԼՈ

ՀՄԸՄ-ի Արմերոյի վարչութեան եւ Սկաուտ-Խորհուրդին կազմակերպութեամբ, 6-8 Մարտ 2009ին տեղի ունեցաւ սկաուտական դպրոց-բանակում՝ Պորնա քաղաքին մէջ:

Դպրոց-բանակումին ընթացքին, սկաուտական գիտելիքներու կողքին, փոխանցուեցան ազգային նիւթով դասախօսութիւններ, ինչպէս՝ Հայ Դատի ուղղութեամբ կատարուող աշխատանքներ եւ այլն: Նիւթը փոխանցեց Հայ Դատի Յանձնախումբի անդամ եղբ. Մասիս Աբրահամեան:

Բանակումին վերջին օրը կատարուեցաւ ծնողներու այցելութիւն՝ բանակավայր: Այս առիթով ներկայացուեցաւ յատուկ ծրագիր: Տեղի ունեցաւ երգման արարողութիւն եւ յանձնուեցաւ Բ. կարգի գիտելիքներու վկայական երկու պարմանուհիներու՝ քոյրեր Նայիրի

Օհանեանի եւ Նարինէ Յակոբեանի: Միջնորդը անցաւ խանդավառ՝ սկաուտական եւ ազգային երգերով ու պարերով:

ՄԻՋԻՆՔԻ ՁԵՌՆԱՐԿ

18 Մարտ 2009ին, Պահքի առիթով, մասնաճիւղին տիկնանց յանձնախումբ-

բին կազմակերպութեամբ, նշուեցաւ Միջինքը: Կրօնական եւ ազգային ժառանգութիւններու եւ աւանդութիւններու պահպանման հեռանկարով, հրամցրուեցան Պահքի ուտելիքներ:



Մասնաճիւղին վարչական կազմը: Զախէն աջ՝ ոտքի. Ազատ Պողոսեան, Օհաննէս Օհաննէսեան, Բաֆֆի Ամիրխանեան եւ Ասլան Ասլանեան: Նստած՝ Սարգիս Տէր Ղազարեան, Յասմիկ Օհանեան եւ Սեւան Կորկիսեան:

ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ

12 Ապրիլ 2009ին, մասնաճիւղին վարչութեան կազմակերպութեամբ, «Elkar About» սրահին մէջ տեղի ունեցաւ մասնաճիւղին չքեղ պարահանդէսը, ներկայութեամբ շուրջ 400 անձերու:

Օրուան բարի գալուստի խօսքը ուղղեց վարչութեան ատենապետ քոյր Յասմիկ Օհանեան:

Պարահանդէսը ընթացաւ ուրախ միջնորդատի մէջ, երգուեցան ազգային ու հայկական երգեր, մասնակցութեամբ երգիչ Երուանդ Փափազեանի:



**Թղթակից
ԼՈՒՏՈՆ**

Շարաթ, 25 Ապրիլին, 1000 է աւելի հայեր, հայկական եւ անգլիական եռագոյնները պարզած, Լոնտոնի հրապարակներէն անցնելով ոգեկոչեցին Հայկական Յեղասպանութեան ՅՎամեակը:

Ոգեկոչման հանդիսութիւնը կազմակերպուած էր CRAGի կողմէ (Հայկական Յեղասպանութեան Ճանաչման Կոմիտէ):

Թափօրը ճամբայ ելաւ Յոյն Օրթոտոքս եկեղեցւոյ քովէն եւ առաջնորդը լեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի սկաուտներուն կողմէ, լման տարագով, շեփորախուճիքի ընկերակցութեամբ: Շուրջ երկու քուկէս ժամ տեւող այս ցոյցը անցաւ Լոնտոնի կարեւոր հրապարակներէն՝ հասնելով յուշակոթող, ուր նահատակներու յիշատակին զետեղուեցաւ ծաղկեպսակ մը:

Մեծն Բրիտանիոյ Հայոց Առաջնորդ Նաթան Եպս. Յովհաննէսեան խօսք առաւ: Պահուեցաւ նաեւ մէկ վայրկեան լռութիւն, ի յիշատակ մէկուկէս միլիոն նահատակներուն: Ապա, ստորագրուե-



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՒՏՈՆԻ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ
ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻՆ**

ցաւ CRAGի պատասխանատու Բաֆֆի Սարգիսեանի կողմէ ներկայացուած խնդրագիր մը, որ յղուեցաւ երկրի վարչապետ Կոլտրն Պրաունի:

**ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ԱՅՅԸ՝
ՔԱՐՏԻՖ ԵՒ ԿԱԼԷՍ**

18 Ապրիլ 2009ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղի սկաուտները մեկնեցան Քարտիֆ, այցելելու Կալէսի հայկական

խաչքարը ու իրենց յարգանքի տուրքը մատուցելու Հայկական Յեղասպանութեան զոհ գացած մէկուկէս միլիոն նահատակներուն:

Նշենք, որ Կալէսը պաշտօնապէս ճանչցած է Հայկական Յեղասպանութիւնը եւ այդ առիթով հաստատած է խաչքար մը, ի յիշատակ նահատակուած հայերու: Ներկայիս հոն կը գտնուին երկու խաչքար, որոնցմէ մէկը քանդուած էր, սակայն անմիջապէս նորոգուած՝ հայութեան յարատեւելու կամքն ու զօրութիւնը արտայայտելով:

Սկաուտները, լման տարագով, այցելեցին խաչքար, ուր երգեցին հայկական քայրերգը: Իր սրտի խօսքը փոխանցեց վարչութեան ատենապետ եղբ. Արմանտ Աբրահամեան: Խաչքարին դիմաց, մէկ վայրկեան լռութեամբ յարգուեցաւ նահատակներու յիշատակը:

Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները վերադարձան՝ օրուան պատգամը իրենց սրտին մէջ:



անցնող 90 տարիներուն շարունակ աճեցաւ, հզօրացաւ ու տարածուեցաւ աշխարհի տարածքին: Միութիւն մը, որ նպատակադրեց պատրաստել ֆիզիքապէս առողջ ու տոկուն քաղաքացին, եւ իմացական ու հոգեկան բարձր արժանիքներով տոգորուած հայ մարդը, սորվեցնելով անոր ըլլալ չարքաշ ու արի, ազգասէր ու հայրենասէր, օրինապահ ու կարգապահ... լեցնելով անոր միտքն ու սիրտը մարզական ազնուագոյն ոգիով»: Եղբայրը իր խօսքը շարունակեց շեշտը դնելով Աւստրալիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան վրայ. «Բախտաւոր ենք, որ 43 տարի առաջ Հ.Մ.Ը.Մ.ական խումբ մը եղբայրներ հեռատեսութիւնը ունեցան հիմը դնելու այս կազմակերպութեան: Կ'ուզենք մեր խոր երախտագիտութիւնը յայտնել անոնց ու նաեւ մեր շնորհակալութիւնը յայտնել այն բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն, որոնք իրենց անհամար ժամերը տրամադրեցին՝ կազմակերպելով բանակումներ, Նաւասարդեան մարզախաղեր, ձեռնարկներ եւ այլն, ըլլան անոնք մասնաճիւղերու կամ Շրջանային Վարչութիւններու անդամներ, թէ յանձնախումբերու մէջ աշխատողներ, սկստական առաջնորդներ, իմբայետներ, խորհուրդի անդամներ եւ անհամար կամաւորներ, որոնք պատասխանատու դիրքերով եւ կամ վարագոյրի ետին լուեխայն աշխատելով յաջողցուցին այս բոլոր գործերը: Անոնք «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի օրինակելի ոգին ցոյց տուին մեզի», ըսաւ ան (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 17):

Շրջանային Վարչութիւնը յատուկ յուշանուէրով պարգեւատրեց Աւստր-



րալիոյ առաջին Շրջանային Վարչութեան (1979) կազմի անդամ եղբայրներ՝ Վազգէն Փայակեանը, Յովհաննէս Մարտոյեանը, Զաւէն Բրուտեանը, Արթուր Աղամալեանը եւ Բաֆֆի Խրրոբեանը: Վերջինին բացակայութեան պատճառով յուշանուէրը յանձնուեցաւ եղբ. Փայակ Աղամալեանին: Շրջանային Վարչութիւնը այս առիթով «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրեց եղբ. Սազօ Պիպէրեանը՝ Հ.Մ.Ը.Մ.ական իր մեծ վաստակին համար:

Ապա, հրաւիրուեցաւ գաղութի Առաջնորդ Սրբազան Հայրը՝ տալու իր պատգամը: Ան ըսաւ. «Այս տարի իր լրումին կը հասնի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 90ամեակը: Արդարեւ, 90 տարիներ առաջ ստեղծուած Հ.Մ.Ը.Մ.ը, իր ծառայութեան լայն դաշտով, յատկապէս սկստական ու մարզական բնագաւառին մէջ, ինքզինք արդարացուցած եւ լաւապէս իր նպատակին ծառայած է: Նշանաբան եւ տեսիլք ունեցող անձնաւորութիւններ, սիրոյ ու ծառայութեան ոգիով լեցուած՝ յաջողցուցին Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութիւնն ու առաքելութիւնը: Այսօր հայրենիքի, Արցախի ու ըՄփիւռքի գաղութներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ը իր ներկայութեամբ ու աշխոյժ գործունէութեամբ ինքզինք պարտադրած տիրանեան կազմակերպութիւն մըն է: Աւստրալահայ գաղութն ալ անմասն չէ մնացած այդ պատուական միութեան ներկայութեան, ներկայութիւն մը որ հասակ առած է գաղութի կազմակերպման տարիներէն ու ցայսօր կը շարունակէ իր առաքելութիւնը:

«Անկիւնագարձային այս պահուն նորանոր յաջողութիւն կը մաղթենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ու յատկապէս Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերուն, շարունակելու իրենց ծանր ու պատասխանատու գործը հայ նորահաս սերունդը սնուցանելու մարմնով, մտքով ու հոգիով:

«Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը պահեցէ՛ք ու պահպանեցէ՛ք հպարտութեամբ»:

90ամեակի եւ շրջանի Նաւասարդեան մարզախաղերու 40ամեակին նուիրուած տօնակատարութիւնը վերջ գտաւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով:

Տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն, որուն ընթացքին զոյգ ամեակներուն առիթով, օրուան իմաստը բնորոշող կարկանդակը հատեցին ներկայ ու նախկին Շրջանային Վարչութիւններու անդամներ, Սրբազան Հայրը եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Այնուհետեւ, վրտօք երիզի ցուցադրութեամբ ներկաները եւ հիւրերը երկար ժամանակ վայելեցին, վերլիշեցին, մանաւանդ վերանորոգուեցան անցնող քառասուն տարիներու յիշատակներով:

րալիոյ առաջին Շրջանային Վարչութեան (1979) կազմի անդամ եղբայրներ՝ Վազգէն Փայակեանը, Յովհաննէս Մարտոյեանը, Զաւէն Բրուտեանը, Արթուր Աղամալեանը եւ Բաֆֆի Խրրոբեանը: Վերջինին բացակայութեան պատճառով յուշանուէրը յանձնուեցաւ եղբ. Փայակ Աղամալեանին: Շրջանային Վարչութիւնը այս առիթով «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրեց եղբ. Սազօ Պիպէրեանը՝ Հ.Մ.Ը.Մ.ական իր մեծ վաստակին համար:

Ապա, հրաւիրուեցաւ գաղութի Առաջնորդ Սրբազան Հայրը՝ տալու իր պատգամը: Ան ըսաւ. «Այս տարի իր լրումին կը հասնի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 90ամեակը: Արդարեւ, 90 տարիներ առաջ ստեղծուած Հ.Մ.Ը.Մ.ը, իր ծառայութեան լայն դաշտով, յատկապէս սկստական ու մարզական բնագաւառին մէջ, ինքզինք արդարացուցած եւ լաւապէս իր նպատակին ծառայած է: Նշանաբան եւ տեսիլք ունեցող անձնաւորութիւններ, սիրոյ ու ծառայութեան ոգիով լեցուած՝ յաջողցուցին Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութիւնն ու առաքելութիւնը: Այսօր հայրենիքի, Արցախի ու ըՄփիւռքի գաղութներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ը իր ներկայութեամբ ու աշխոյժ գործունէութեամբ ինքզինք պարտադրած տիրանեան կազմակերպութիւն մըն է: Աւստրալահայ գաղութն ալ անմասն չէ մնացած այդ պատուական միութեան ներկայութեան, ներկայութիւն մը որ հասակ առած է գաղութի կազմակերպման տարիներէն ու ցայսօր կը շարունակէ իր առաքելութիւնը:

«Անկիւնագարձային այս պահուն նորանոր յաջողութիւն կը մաղթենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին ու յատկապէս Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերուն, շարունակելու իրենց ծանր ու պատասխանատու գործը հայ նորահաս սերունդը սնուցանելու մարմնով, մտքով ու հոգիով:

«Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը պահեցէ՛ք ու պահպանեցէ՛ք հպարտութեամբ»:

90ամեակի եւ շրջանի Նաւասարդեան մարզախաղերու 40ամեակին նուիրուած տօնակատարութիւնը վերջ գտաւ Սրբազան Հօր «Պահպանիչ»ով:

Տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն, որուն ընթացքին զոյգ ամեակներուն առիթով, օրուան իմաստը բնորոշող կարկանդակը հատեցին ներկայ ու նախկին Շրջանային Վարչութիւններու անդամներ, Սրբազան Հայրը եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Այնուհետեւ, վրտօք երիզի ցուցադրութեամբ ներկաները եւ հիւրերը երկար ժամանակ վայելեցին, վերլիշեցին, մանաւանդ վերանորոգուեցան անցնող քառասուն տարիներու յիշատակներով:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍՏՐԱԿԻՈՅ ՄԻՋ-ՄԱՄՆԱՃԻԻՂԱՅԻՆ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 40ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ

- «ԱՆԴՐԱՆԻԿ» ՄԱՄՆԱՃԻԻՂԸ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ԱՌԱՋԵՆՈՒԹԵԱՆ

- ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՋՈՒԹԻՒՆԸ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԵՂՐԱՅՐՆԵՐ ՍԱՀԱԿ ԵՂՈՑԵԱՆԸ, ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՆՈՑԵԱՆԸ ԵՒ ՍԱՐԳԻՍ ՊԻՊԻՐԵԱՆԸ

Յովհաննես Մարտոյեան ՍիՏԻ

ՀՀ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ միջմասնաճիւղային Նաւասարդեան 40րդ մարզախաղերը, նուիրուած՝ միութեան հիմնադրութեան 90ամեակին, իրագործուեցան փայլուն յաջողութեամբ:

1968ին սկիզբ առած Նաւասարդեան մարզախաղերը քառասուն տարի անընդհատ ազգային մեծ ոգեւորութեամբ իրենց շուրջ համախմբեցին բազմազար հայորդիներ, որոնք ներշնչուեցան ստեղծուած հայաբոյր միջնորդութեամբ և մրցակցութեան ազնիւ ոգիով վերակենդանացուցին անցեալի Նաւասարդեան



տոհմիկ աւանդութիւնները, արժէքները, գոյատեւելու եւ յաղթանակելու մեր նախնիներու կամբք:

Տարբեր չեղան նաեւ Նաւասարդեան վերջին հանդիպումները: Շրջանի հինգ մասնաճիւղերու աւելի քան 300 երկսեռ

մարզիկներու ելոյթները խանդավառութեան ալիքով ողողեցին աւստրալահայ գաղութը եւ յատկապէս սիտնիարնակ հայորդիները, որոնք զնահատելի ներկայութեամբ քաջայերեցին մեր տղաքն ու աղջիկները:

Նաւասարդեան 40րդ մարզախաղերու պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի սկաուտական հաւաքավայրին կից, Ֆուլթայոլի դաշտին մէջ:

Մասնաճիւղերէն սկաուտական պատուիրակութիւն մը բարձր բռնած Աւստրալիոյ, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի եւ սկաուտական դրօշակները, առաջնորդեց մարզական եւ սկաուտական խումբերը, որոնք համաչափ քայլերով տեղ գրաւեցին դաշտին կեդրոնը: Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Քորթեան այս առիթով շնորհաւորեց մասնակցող մասնաճիւղերու վարչութիւններն ու մարզիկները եւ յոյս յայտնեց, որ խաղերը կ'ընթանան եղբայրական հասկացողութեամբ: Իր խօսքին աւարտին, Քորթեան Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրեց վաստակաշատ, անխոնջ եղբայր Սահակ Եղոյեանը:


Յաջորդեց երէց տղոց Ֆուլթայոլի մրցումը, որ իրարու դէմ հանեց «Անդրանիկ» եւ «Արաքս» խումբերը: Մրցումը վերջ գտաւ «Արաքս» մասնաճիւղին յաղթանակով: Ողբացեալ եղբ. Թորոս Գարամանեանի յիշատակին հաստատուած շրջուն բաժակը իր գաւկին՝ Ար-



մէն Գարամանեանի ձեռամբ յանձնուեցաւ յաղթական խումբին:

Նոյն օրը, կէսօրէ առաջ, «Անդրանիկ» մասնաճիւղի սկաուտական կեդրոնին մէջ տեղի ունեցան փինկ-փոնկի զտումները եւ աւարտականները:

Յաջորդ օր, պասքեթպոլի գոյգ դաշտերու վրայ տեղի ունեցան պասքեթպոլի բոլոր տարիքի երկսեռ



թիւնը:

Երեկոյեան տեղի ունեցաւ 18 տարեկանէն վեր երիտասարդական պարանցիկ երեկոն. մեծ թիւով երկսեռ երիտասարդութիւն, ուրախ մթնոլորտ, մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր: Իսկապէս արժանաւայել նախաձեռնութիւն:

Մարզախաղերուն երկրորդ օրը կատարուեցան պասքեթպոլի զտումի եւ աւարտական կարգ

խումբերու զտումները՝ Ֆետերասիոնի կողմէ տրամադրուած վկայեալ իրաւարարներու հսկողութեամբ: Յստակացան աւարտականին հասնող խումբերը: Բոլոր զտումներուն Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները ցուցաբերեցին

տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի կեցուածք: Ներկայ մարզասէր հասարակութիւնը դաշտէ դաշտ երթալով տեւական քաջալերեց բոլորը: Հետաքրքրական ու տաք խաղարկութիւն էր սրահի Փութպոլը, որ գրաւեց բոլորին ուշադրու-

մը մրցումներ, վկայեալ իրաւարարներով: Եզրափակիչ մրցումը եղաւ տղոց պասքեթպոլի աւարտականը, որ ինչպէս նախորդ տարիներուն, այս անգամ եւս իրարու դէմ հանեց «Արարատ» եւ «Նաւասարդ» մասնաճիւղերու խումբերը,

Made from one single slice of natural Australian opal

Classique

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



որոնք ցուցադրեցին բարձր խաղաոճ եւ մրցակցութեան եղբայրական ոգի: Ներկայ մարզասէր հասարակութիւնը երկարատեւ ծափերով եւ խրախուսիչ կանչերով քաջայերեց մրցող խումբերը: Մրցումը աւարտեցաւ «Արարատ» մաս-

նաճիւղին յաղթանակով: Յաջորդաբար չորրորդ տարին ըլլալով «Արարատ» տիրացաւ յաղթանակի բաժակին:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Նոյն օրը, երեկոյեան ժամը 8էն սկսեալ, տեղի ունեցաւ Յաղթանակի պարահանդէսը: Երեկոն ճոխացուց երգչուհի Լուսինէ Գոշեան, ընկերակցութեամբ «Երեւան» նուագախումբի: Սրահը հագած էր հայարոյր տարագ:

Օրուան հանդիսավար, Շրջանային Վարչութեան կրտսերագոյն անդամ եղբ. Բաֆֆի Չափրագեան երկու լեզուներով բարի գալուստի խօսք արտասանեց ներկաներուն, ապա ան մանրամասնեց օրուան իմաստը, անդրադառնալով Հ.Մ.Ը.Մ-ի 90ամեակին եւ շրջանի Նաւասարդեան մարզախաղերու 40ամեակի նշանակալից տարեդարձներուն: Ան շեշտը դրաւ երիտասարդութեան դերակատար ըլլալու անհրաժեշտութեան, աշխատանքներու նախաձեռնութեան, ապագային ղեկավար ըլլալու եւ, վերջապէս, միութեան վերելքին մասնակից ըլլալու հրամայականին վրայ:

Խօսք տրուեցաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Քորթեանին: Եղբայրը ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 90րդ եւ շրջանի Նաւասարդեան միջ-մասնաճիւղային մարզախաղերու 40րդ տարեդարձներուն առիթով յառաջացած յանձնախումբը, եւ իր խօսքը եզրափակեց կոչ ուղղելով սրահին մէջ հաւաքուած բազմութեան ու յատկապէս երիտասարդութեան, հետաքրքրուելու ու մասնակցելու մասնաճիւղերու վարչութիւններու հայանրուէր բոլոր ծրագիրներուն իրագործման ու յաջողութեան:

Այս առիթով, եղբ. Քորթեան «Ծառաշուքեան» շքանշանով պարգեւատրեց բազմափաստակ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Անդրանիկ Բանոյեանը:

Ապա, հանդիսավար եղբ. Բաֆֆի Չափրագեան յայտարարեց երեք անուններ՝ իւրաքանչիւրին տալով յուշանրուէր մը.-

1.-«Անդրանիկ» մասնաճիւղ- մարզախաղերու ընդհանուր դասաւորումի առաջին հանդիսացած մասնաճիւղ:

2.- «Նաւասարդ» մասնաճիւղ- Ամէ-

ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 40ՐԴ ՄԱՐԶԱՆԱԿՆԵՐՈՒ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ – ՍԻՏՆԻ

- Մարզախաղերու ընդհանուր դասաւորման առաջին - «Անդրանիկ» մասնաճիւղ
- Ամէնէն կազմակերպուած մասնաճիւղ - «Նաւասարդ» մասնաճիւղ
- Ամէնէն մեծ յառաջդիմութիւնը ունեցած մասնաճիւղ - «Արաքս» մասնաճիւղ

●ԵՐԵՏՆԵՐ

- Սրահային ֆութպոլի ախոյեան - «Անդրանիկ»
- Բացօդեայ դաշտի ֆութպոլի ախոյեան - «Արաքս»
- Փինկ-փոնկի ախոյեան - «Արարատ»
- Տղոց պասքեթպոլի (Ա.) ախոյեան - «Արարատ»
- Տղոց պասքեթպոլի (Բ.) ախոյեան - «Արարատ»
- Տղոց պասքեթպոլի (Գ.) ախոյեան - «Արարատ»
- Աղջկանց պասքեթպոլի (Ա.) ախոյեան - «Անդրանիկ»
- Երկսեռ պասքեթպոլի ախոյեան - «Արարատ»

●16 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ

- Տղոց պասքեթպոլի ախոյեան - «Անդրանիկ»
- Աղջկանց պասքեթպոլի ախոյեան - «Անդրանիկ»

●14 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ

- Երկսեռ պասքեթպոլի ախոյեան - «Անդրանիկ»

●12 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ

- Երկսեռ պասքեթպոլի ախոյեան - «Արաքս»
- Սրահային ֆութպոլի ախոյեան - «Արարատ»

●7 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ

- Սրահային ֆութպոլի ախոյեան - «Անդրանիկ»

նէն կազմակերպուած մասնաճիւղ:

3.- «Արարա» մասնաճիւղ- Մեծագոյն յառաջդիմութիւնը ունեցած մասնաճիւղ:

Եղբ. Չափրագեան ներկայացնելէ ետք «Երեւան» նուագախումբը եւ երգչուհի Լուսինէ Գոշեանը՝ հրաւիրեց զանոնք խանդավառելու երեկոն: Տօնակատարութիւն, խրախճանք, պարահանդէս, երիտասարդական ուրախ հաւաք, ահա այսպիսի միախառն ոգեւորութեան մթնոլորտ մը ստեղծուեցաւ, ամէն տարիքի հայորդիներ շուրջպար բռնեցին, երգեցին նուագախումբի եղանակներուն ազդեցութեամբ, գեղեցիկ ու ոգեշնչող ամբողջութիւն մը կազմելով: Այս չէ՞ արդեօք Նաւասարդեան խաղերու Յաղթանակի պարահանդէսին նպատակը:

Դադարի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ Աւստրալիոյ Նաւասարդեան մարզախաղերու 40ամեակի գոյգ առիթներով պատրաստուած կարկանդակը հատեցին Շրջանային Վարչութիւնը, մասնաճիւղերու վարչութիւնները եւ յանձնախումբի անդամները:



Յաղթանակի պարահանդէսը նոյն ուժ նահատակ՝ քայլերգով: Թափով շարունակուեցաւ մինչեւ առաւօտեան ժամը 1.30 եւ վերջ գտաւ «Յա-

ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՌՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ

ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԿԱՌՈՅՑԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ

Թղթակից ՄիՏնի

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի սկաուտական կազմին, Կլէնտֆիլտի սկաուտական բանակավայրին մէջ տեղի ունեցաւ եռօրեայ բանակում մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին «Արարատ», «Անդրանիկ» եւ «Նաւասարդ» մասնաճիւղերու սկաուտական խումբերը՝ մօտաւորապէս 80 գայլիկ-արծուիկներ եւ արի-արեւոյշներ: Բանակումին աշխատանքները եզրափակուեցան





դրոշակի պաշտոնական արարողութեամբ: Արարողութեան ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ՝ եղբայրներ Վիգէն Քորթեան, Տիրան Վահրատեան եւ Արա Պողոսեան, պատուոյ հիւրեր եւ նախկին խմբապետներ՝ եղբայրներ Յովհաննէս Մարտոյեան եւ Վաչիկ Վարդանեան:

«Արարատ» սկաուտական կազմի խմբապետ եղբ. Սուրիկ

տայայտուեցան խմբապետներուն, ծնողական յանձնախումբերուն եւ միութեան վերելքին համար աշխատող անցեալի եւ ներկայի անձաւորութիւններուն մասին: Այնուհետեւ ներկաները ուղղուեցան դաշտին միւս կողմը, ուր խարուկահանդէսի ձոխ յայտագիր տեղի ունեցաւ, երեք մասնաճիւղերու սկաուտներուն մասնակցութեամբ:

Սարգսեան հանդիսութիւնը բացուած յայտարարեց: Ապա, մասնաճիւղի խմբապետական, սկաուտական եւ ծնողական յանձնախումբին անունով բարի գալուստի խօսք ուղղեց քոյր Նորա Սեւակեան: Յաջորդաբար, խօսքեր արտասանեցին եղբայրներ Սուրիկ Սարգսեան, Արա Օհաննէսեան եւ Վիգէն Քորթեան, որոնք բոլորն ալ շեշտեցին սկաուտական մարզէն ներս տարուած հրակայ աշխատանքը եւ զնահատանքի խօսքերով ար-

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL




PAVILLON MONCEAU PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating / air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer.
The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com



Studio VICKEN 2005 PARIS



«ՀԱՅ ՍԿԱՌՈՒՏԻ ՕՐ»ՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՍԿԱՌՈՒՏՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈՔԵՑԻՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՆՍԱԿԱՐԿ ԾԱՌ-ԱՅԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԵՐԴՈՒՄՆ ՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ

Թղթակից
ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

Նվաճումներ
թե՛ ամբ
Հ.Մ.Ը.Մ.ի Լի-
բանանի Շրջա-
նային Վարչու-
թեան, նախագահութեամբ Լի-
բանանի Հայոց Թեմի Առաջ-
նորդ Գեղամ Եպս. Խաչերեա-
նի, կազմակերպութեամբ Հ.-
Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանա-
յին Սկստակա՛ն Խորհուր-
դին եւ խմբապետական կազ-
մին, Կիրակի, 22 Փետրուար
2009ի երեկոյեան ժամը 6ին,
ԵՌԻՆԵՍՒՔՕ-ի սրահին մէջ տեղի ունե-
ցաւ «Հայ Սկստակա՛ն Օրը», ներկայու-
թեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վար-
չութեան եւ Շրջանային Վարչութեան
ներկայացուցիչներու, Լիբանանի
սկստակա՛ն Ֆետերասիոնի նախագա-
հին, մեծաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ
համակիրներու:

Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կատա-
րողութեամբ Լիբանանի եւ Հայաստանի
քայլերգներուն ունկնդրութենէն ետք,
«ՈՎ հայ արի» քայլերգով սկստակա՛նը
կատարեցին տողանցք մը, որմէ ետք
կազմակերպիչներուն անունով խօսք
առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանա-
յին Խմբապետ եղբ. Յակոբ Չպլաքեան:
Ան ըսաւ, որ «Հայ Սկստակա՛ն Օրը»
մարդկային եւ ազգային իսկական ար-
ժէքներու կառչելու օրն է:

Շարունակելով, եղբ. Չպլաքեան
յայտնեց, թէ այսօր, բոլոր ժամանակնե-
րէ աւելի, սկստակա՛նը ունի իր կա-



րելոր դերակատարութիւնը ընկերու-
թեան մէջ, եւ այս առնչութեամբ Հ.Մ.-
Ը.Մ.ին վստահուած է մեծ պարտակա-
նութիւն: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի
սկստակա՛նները փոքր տարիքէն կը թըր-
ծըլին ազգային-միութենական միջնո-
ւրտով, որպէսզի հետագային կարենան
պահել հայ ժողովուրդի հարստութիւն-
ները եւ ծառայել ազգին:

Ապա, յաջորդաբար, մոկլիները ար-
տասանեցին «Հայ եմ ես»ը, գայլիկները
երգեցին «Գետաշէն»ը, արենոյշները
ներկայացուցին հայկական ժողովրդա-
յին պար մը, նուազախումբը նուազեց
սկստակա՛ն երեք երգեր, իսկ արիներ-
ը ներկայացուցին «Խոստում» կենդա-
նի պատկերը:

Գեղարուեստական յայտագիրի
առաջին բաժինէն ետք, ցուցադրուեցաւ
տեսերիզ մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրու-
թեան, պատմութեան եւ ներկայ աշխա-
տանքներուն մասին: Ապա, արիներն ու
երէցները ներկայացուցին բուրգ մը ու

երգման արարողութեան
կենդանի պատկեր մը, որուն
ընթացքին անոնք պատրաս-
տած էին Ծիծեռնակաբերդի
մանրակերտը:

Այնուհետեւ, նուազա-
խումբին ընկերակցութեամբ,
պարմանուհի մը երգեց «Բըն-
քոյշ հայրենիք» եւ «Մարերի
հովին մեռնեմ» երգերը, իսկ
արենոյշները՝ «Հայաստան»
երգը:

Հանդիսութեան աւար-
տին իր սրտի խօսքը փոխան-
ցեց Լիբանանի Հայոց Թեմի
Առաջնորդ Գեղամ Եպս. Խա-
չերեան, որ նշեց, թէ
Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի կեանքին
մէջ ամէն օր եւ ամէն տեղ ներկայ ըլլա-
լու գրաւականին դէմ յանդիման կը
գտնուի, եւ այս օրը Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով
լաւատեսութեամբ պարելու օրն է՝ «Հայ
Սկստակա՛ն Օրը»ն է:

Առաջնորդը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը
իր հիմնադրութեան օրէն նպատակազ-
րած է ծառայել ժողովուրդին՝ առաջ-
նորդուելով «Առողջ մարմին, արթուն
միտք, ազնիւ հոգի» կարգախօսով եւ
հայկական սկզբունքներով: Ան իր խօս-
քը եզրափակելով շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը
հպարտութիւն ստեղծող միութիւն մը
ըլլալու կողքին՝ հայպէս «Հայկական է,
պատուական է», որուն խորքը հայ ժո-
ղովուրդի արժանապատուութեան պահ-
պանումն ու գոյատեւումն է:

«Հայ Սկստակա՛ն Օրը»ը փակուեցաւ
«Յառաջ նահատակ» քայլերգով:



«ՄԿԱՌԻՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՔԵՍԱՊԻ...

Թղթակից քեսապ

ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդին կազմակերպուած է թեմը, Կիրակի, 1 Մարտ 2009ին տեղի ունեցաւ «Հայ Սկաուտի Օր»ուան տօնակատարութիւն՝ «Մարդարապատ» սրահին մէջ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբ-իոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդէն ներկայացուցիչներու, խմբապետներու, քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ քեսապահայերու:

Տօնակատարութեան բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի խմբապետուհի քոյր Դարար Թովթիկեան: Ան իր խօսքին մէջ նշեց Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտութեան դերը նորահաս սերունդներու



կեանքին մէջ եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտութիւնը եղած է նորահաս սերունդներու ազդային գիտակցութեան, հայրենասիրութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատարմութեան, բարոյական եւ բարձր նկարագրի արժանիքներու տէր կարեւոր միութիւններէն մէկը»:

Այս առիթով ներկայացուեցաւ գե-

ղարուեստական կոկիկ յայտագիր, որ ընդգրկեց կենդանի պատկեր մը՝ «Սկաուտութեան հիմնադրութիւն»ը նիւթով, ասմունք, ներկայացում՝ «Քեսապի աւանդութիւններ», մեներգ, նուագ եւ բուրգերու կազմութիւն:

Յայտագրի աւարտին տեղի ունեցաւ վկայականաց բաշխում. խումբ մը սկաուտներ ստացան Նորագրի եւ Նորընծայի վկայականներ: Ապա բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան եւ փոխանցեց Շրջանային Խորհուրդի խօսքը՝ շեշտելով սկաուտութեան դերը հայապահպանման մեր ճիգերուն մէջ:

Հոսակ, Եղիշէ Քհնյ. Սարգիսեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ «Պահպանիչ»ով փակեց տօնակատարութիւնը:

...ԵՒ ԼԱԹԱՔԻՈՅ ՄԷՋ



Ալին Գաբրիէլեան ԼԱԹԱՔԻԱ

ՀՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղը «Հայ Սկաուտի Օր»ը մեծաշուք հանդիսութեամբ մը տօնեց Ուրբաթ, 13 Մարտ 2009ին, մասնաճիւղի ըսկաուտ-Խորհուրդին կազմակերպութեամբ եւ խմբապետական ու աստիճանաւորական կազմին ջանքերով:

Տօնակատարութեան ներկայ եղան Գառնիկ Քհնյ. Զափանեան, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ներկայացուցիչներ եւ խմբապետութիւն, քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ մեծաթիւ ծնողներ:

Օրուան յայտագրին մէջ ուշադրաւ էր մասնաճիւղին շե-

փորձախոսմամբ, որ Սուրբիոյ եւ Հայաստանի քայքայներու կողմէն, իր ազգայնաշունչ եղանակներով խանդավառեց ներկայները:

Նշելի է, որ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի ջանքերով ստացուած 17 երաժշտական գործիքները աւելի եւս խանդավառեցին շեփորախոսմամբին երիտասարդները:

Մասնաճիւղի խմբապետ եղբ. Պետրոս Գաբուանեան իր բացման խօսքով շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք իրենց զաւակները վստահած են Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցին:

Ապա խօսք տրուեցաւ Սկառու. Խորհուրդի ատենապետ քոյր Ալին Գաբրիլեանին: Ան յիշեց, թէ Հայ սկառու դեկավարներ որոշած են Հ.Մ.Ը.Մ.ի սկառուներու օրը նշել Վարդանանցին, Հայ սկառուին հոգիին մէջ վառ պահելու համար Վարդանանց նահատակներու ազգային ոգին ու անմահ յիշատակը: Ուստի,- աւելցուց քոյրը,- Վարդաններու օրինակէն խրախուսուած, թող խտանան մեր շարքերը՝ արդարացնելու համար Հայ ժողովուրդի արժանաւոր ժառանգորդները ըլլալու մեր կոչումը:



Յայտագրին բացումը կատարուեցաւ սկառու քոյր-եղբայրներու կողմէ Հայ երիտասարդութիւնը խորհրդանշող կենդանի պատկերով, որ կ'ընդգրկէր Հայ զինուորը, ուսանողը, հողագործը եւ մարզիկը: Ապա տեղի ունեցաւ սկառուներու երգման արարողութիւն եւ փոխ առաջնորդի, առաջնորդի, վարիչ առաջնորդի աստիճանատուութիւն: Այնուհետեւ, գայիկները փոխանցուեցան սկառուական շարքեր՝ ստանալով կարմիր փողկապներ եւ Նորագիրի վկայականներ:

Այս առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Սկառու. Խորհուրդին խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան շնորհաւորեց «Հայ Սկառուի Օր»ը եւ յայտնեց, որ համաշխարհային սկառուութեան կողմէ յարմար նկատուած է Փետրուար 22ը հռչակել «Սկառուի Օր»: Թուական մը, որ կը զուգադիպի սկառուութեան հիմնադիր Լորտ Պէյտրն Փառուլի ծննդեան տարեդարձին եւ սկառուութեան հիմնադրութեան: Եղբայրը նշեց նաեւ, որ ծառայելով Հ.Մ.Ը.Մ.ի սկառուական շարքերուն, ազգային դիմագիծը միշտ եզակի պահելով, հաստատ վճռակամութեամբ յառաջ կ'երթանք՝ Բրիտեաններու, Հինդլեաններու եւ Յակոբեաններու ջահը անմար պահելով:

Յայտագրի ընթացքին ներկայացուեցան սկառուական չափական մարզանքներ, բուրգեր, հայկական, արաբական, եւրոպական պարեր եւ զաւեշտներ:

Տօնակատարութեան աւարտին, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գառնիկ Քհչնյ. Չափանեան Հ.Մ.Ը.Մ.ին մաղթեց նորանոր նուաճումներ: Ապա, ան «Պահպանիչ»ով փակեց տօնակատարութիւնը:

Տօնակատարութեան աւարտին, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գառնիկ Քհչնյ. Չափանեան Հ.Մ.Ը.Մ.ին մաղթեց նորանոր նուաճումներ: Ապա, ան «Պահպանիչ»ով փակեց տօնակատարութիւնը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
 32-38, Hanrabadoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europehotel.am

www.europehotel.am

ԲԱՐԵԿԻՐԹ ԸԼԼԱՆՔ

ՉԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ

Քաղեց՝ Սալբի Լատոյեան
ՊԵՅՐՈՒԹ



անդէսներ, թատրոն, դասախօսութիւն, ներկայացում, ելոյթներ- ասոնք հասարակաց վայրեր են, ուր պէտք է ներկայ ըլլալ ժամանակին, սկսելէն ոչ շատ առաջ եւ ոչ ալ՝ վերջ :

Պէտք է յարգել ճշդուած ժամը: Սրահ մտած ատենդ մի՛ աճապարեր լաւագոյն ակնոք գրաւելու, ո՛չ ալ դիմացինդ հրէ առջեւ անցնելու համար, այլ՝ նստէ քեզի ցոյց տրուած տեղը:

Ներելի չէ սրահին մէջ բարձրաձայն խօսիլը, սուլելը, պոռալը, խնդալը կամ հեռաձայնով խօսիլը:

Երբ տեսնես որ ձեռնարկ մը կ'ուշանայ իրաւունք չունիս բարձրաձայն գանգատելու:

Երբ դասախօսութիւններէ ետք գաղափարներ արտայայտելու առիթը տրուի քեզի, եղիր լայնամիտ, մեծ գիտնականի հովեր մի՛ տար դուն քեզի, համարձակութիւնը ունեցիր տեսակէտդ յայտնելու պարզ եւ կարճ ձեւով:

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

ՄԱՐԴԸ ԼՈՒՍՆԻՆ ԿՐԱՅ

20

Յուլիս 1969ին, «Ափոլլո 11»-ի ամերիկացի տիեզերագնացները, պամոլթեան մէջ առաջին անգամ ըլլալով, իրենց ոտքերը դրին լուսնին վրայ: Լուսնի վրայ քաղող առաջին տիեզերագնացները եղան Նիլ Արմսթրոնգ եւ Պազ Ալտրին: Լուսնի վրայ էջքն ու անոնց առաջին քայլերը ցուցադրուեցան պատկերասփիւռի միջոցով: 1972ին, «Ափոլլո»-ի վերջին տիեզերագնացութեան, աստղանաւորները բազմաթիւ շրջաններ հետազօտեցին, լուսանկարներ առին եւ գետեղեցին գործիքներ, որոնք թանկագին տեղեկութիւններ հայթայթեցին լուսնի մասին:

Ժայռերու նմոյշները, որոնք իրենց հետ բերին, քննուեցան ամբողջ աշխարհի գիտնականներուն կողմէ: Այժմ գիտենք, թէ երկիրը եւ լուսինը ունին միեւնոյն ծագումը եւ կազմուած են միեւնոյն շրջանին:

«Ափոլլո»-ի առաքելութեան ընթացքին տիեզերագնացութեան ձգած ոտնահետքերը պիտի չանյայտանան, որովհետեւ լուսնի վրայ ո՛չ հով կայ, ոչ ալ անձրեւ: Այդ ոտնահետքերը տեսանելի պիտի մնան առնուազն 10 միլիոն տարի:






ՆԵՐՎԷ



ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ՍԵՒ ՍԱՄՊՈ



Անտառին մեջ վագր մը տեսաւ Սեւ Սամպոն.
 -Սեւ Սամպօ, Սեւ Սամպօ, քեզ պիտ' ուտեմ.
 Պզտիկ Սամպոն ըսաւ.-
 Չիս մի ուտեր, քեզի կու տամ իմ շապիկս, կարմիր շապիկս:

Եկաւ ուրիշ վագր մը տեսաւ Սեւ Սամպոն.
 -Սեւ Սամպօ, Սեւ Սամպօ, քեզ պիտ' ուտեմ.
 Պզտիկ Սամպոն ըսաւ.-
 Չիս մի ուտեր, քեզի կու տամ իմ տաբատս, կապոյտ տաբատս:

Եկաւ ուրիշ վագր մը տեսաւ Սեւ Սամպոն.
 -Սեւ Սամպօ, Սեւ Սամպօ, քեզ պիտ' ուտեմ.
 Պզտիկ Սամպոն ըսաւ.-
 Չիս մի ուտեր, քեզի կու տամ իմ կօշիկներս, վարդագոյն կօշիկ:

ԿԵՆԴԱՆԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ԱՌԻԲԾԸ

Առիւծը ստնաւոր եւ մսակեր կենդանի մըն է. Արու առիւծները կ'ունենան բաշ, էգերը չեն ունենար: Արու առիւծը կշիռքով աւելի ծանր կ'ըլլայ, օրական 7 քլկ. միս կ'ուտէ եւ կ'ապրի 12 տարի: Մինչդեռ էգ առիւծը կշիռքով աւելի նուազ կ'ըլլայ, օրական 5 քլկ. միս կ'ուտէ եւ կ'ապրի 14-20 տարի:

Արու առիւծը անտառին թագաւորն է եւ նա- եւ... անտառին ծոյլը, որովհետեւ էգ առիւծը կ'որսայ եւ ուտելիք կ'ապահովէ արու առիւծին:

Ընդհանրապէս առիւծները ցերեկը հանգիստ կ'ընեն եւ մթնշաղին որսի կ'ելլեն: Հետաքրքրական է յիշել, թէ առիւծին պոչը ո՛չ միայն ճանճերը քշելու համար է, այլ երբ ան վտանգի մէջ ըլլայ՝ պոչը անմիջապէս շարժելու կը սկսի:


էգ առիւծները 1-4 կորիւն կ'ածեն եւ այդ կորիւնները 3-4 շաբաթ կը պահուին, ապա կը միանան խումբին:

Առիւծը կը սիրէ ապրիլ խումբով: Իւրաքանչիւր խումբ բաղկացած կ'ըլլայ 3-30 առիւծներէ, որոնցմէ 1-7ը արու կ'ըլլայ: Արու կորիւնները երբ 3 տարեկան ըլլան կը ձգեն խումբը եւ կը փնտռեն նոր խումբ մը, իսկ էգերը մինչեւ վերջ կ'ապրին նոյն խումբին հետ:

Արու առիւծները կը կռուին իրարու հետ՝ հասնելու համար խումբին գլուխը: Առիւծներ կը սատկին այս կռուին ընթացքին, իսկ ոմանք ալ կը վիրաւորուին: Յաղթողը կ'ըլլայ խումբին մեծը:

Առիւծները զիրար կը բարեկեն: Բարեւը վստահութիւն եւ ապահովութիւն կը ներշնչէ իրենց, իսկ այն առիւծը, որ խումբին քովէն կ'անցնի առանց բարեկենտի՝ խումբը ինքզինք վտանգի մէջ կը զգայ եւ կը զգուշանայ:

Առիւծներու ձայնին կ'ըսենք մոնչաբ:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
 Որո՞ւ գլխուն մէջ
 ուղեղ չկայ:
 (Պատասխանը՝ յաջորդի:
 Նախորդ հանելու-
 կին պատասխանն էր Արեւ):





Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ